



**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ**

**ԱՄԵՆԱԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՇԱԿԱՌՈՒԻ ԿԱՆԽԱԿԱՐԿԱԾ**

Քաղաքական շաբաթը առատ էր հետաքրքրական նրբերանգներով. վարչապետ Սերժ Սարգսեանը, խօսելով Ռոբերտ Բոչարեանի՝ ապագայում ՀՀ վարչապետի պաշտօն ստանձնելու հնարավորությունների մասին, բառականին պարզ շեշտեց. «Ես չեմ տեսնում այդպիսի ցանկություններ Ռոբերտ Բոչարեանի մասին»: Աստիճանաբար ուրուագծուեց նաև մրցակցությունների նոր ասպարեզ, ինչպիսին է ԱԺ վերահսկիչ պալատի նախագահի թեկնածուի հարցը, որ պետք է առաջադրուի նոր Ռոբերտ Բոչարեանի կողմից, եւ որը կարող է հանգեցնել ՀՀԿ-ԲՀԿ-ՀՅԴ «ոչ սիրային եռանկյուն» առաջացմանը: Դե, իսկ Լեւոն Տէր-Պետրոսեանի թեման քննարկումների առումով շարունակում է մնալ ռեկորդակիր:

Եղան եւ բաներ, որոնք, կարծես թէ, ներքաղաքական զարգացումների ու ինտրիգների հետ առնչություններ հունեն. գործընկեր, լրատվամիջոցների համաշխարհային ընկերակցությունը յանկարծ որոշեց, որ հայոց լրագրողները անգլիական լրագրից ոչնչով պակաս չեն ու, հետեւաբար, Յովնանեանների բարձր հովանու ներքո պետք է սովորեն գոլֆ խաղալ, եւ ապագայում անպայման մասնակցեն այդ էլիտար մարզաձեւի առաջնությունը: Անշուշտ, Հայաստանի լրագրողները հաստատ աւելի էլիտար կոնսերվատիվ են, քան մայրաքաղաքի կենտրոնում «էլիտար» շինարարությունը իրագործողներն ու այդ շինարարությունից օգտուողներից շատերը, սակայն նրանք ոչ այնքան ձեւաւորում են քաղաքական դաշտը, որքան դա արտացոլում, բնականաբար, ելնելով սեփական անձնական կամ կորպորատիւ ճաշակից: Բայց, այնուամենայնիւ այդ արտացոլումը որոշ դէպքերում ի յայտ է բերում կարեւոր նրբերանգներ:

Վարչապետի պնդումը, որ Ռոբերտ Բոչարեանի մօտ ինքը չի տեսնում ապագայ վարչապետության ցանկություններ, բառականին լայն արձագանքներ է գտել: Միգուցէ ՀՀ նախագահը իրօք այդպիսի ցանկություններ չունի, միգուցէ ՀՀԿ առաջնորդի այդ քայլով ինչ-որ տեղ կանխուում էր այդպիսի ցանկություններ արտայայտելու հնարավորությունը, միգուցէ այդտեղ աւելի բազմաշերտ հանգամանքներ կան: Սակայն հե-

տաքրքիր բան տեսան հեռուստադիտողները՝ ի դէմս հեռուստամեկնաբան Ռաֆիկ Յովհաննիսեանի, ով դատողություններ արեց, որ ի, տարբերություն Ռուսաստանի, ուր գրեթէ ոչ ոք չի կասկածում, որ Վլադիմիր Պուտինը կեանքի կը կոչի որպէս վարչապետ շարունակելու իր ցանկությունը, Հայաստանում հնարաւոր չէ, որ Ռոբերտ Բոչարեանը կարողանայ 2008-ին ստանձնել վարչապետությունը, եւ դա, իբր, վկայում է հայոց բարձր ժողովրդավարությունից: Պարզ է, որ երկիր գործող նախագահի վերաբերեալ հեռուստաթերթում այդպիսի կոչող դատողություն կարող էր ի յայտ գալ միայն մի դէպքում՝ եթէ դրա «դաբոն» ստուղ է եղել, քանզի մեզանում հեռուստատեսության անկախությունը հաւատարմորէն դժուար է գտնել անգամ մանկապարտէզային տարիքային խմբում:

Այսինքն՝ բացուել է քարոզական մի ուղղություն, որի թէպէտ, թէ Ռոբերտ Բոչարեանը չի կարող դառնալ Հայաստանի վարչապետ, քանի որ չի կարող դառնալ երբեք: Այսինքն՝ նոր Ռոբերտ Բոչարեանին չեն էլ ուզում հարցնել այդպիսի ցանկություններ առկայության մասին, քանզի թէեւ ժամանակին նա ծրագրել էր կարկատանային խորհրդարանական մեծամասնություն ձեւաւորումը, այնուամենայնիւ ձեւաւորուեց հանրապետական խորհրդարանական մեծամասնություն: Աւելին, «նախագահական պրոեկտ» համարուող ԲՀԿ-ն շտապեց կոալիցիոն կազմել ՀՀԿ-ի հետ եւ մինչ օրս հաւաստիացնում է, որ պաշտպանելու է ՀՀԿ-ի առաջադրած կոալիցիոն միասնական թեկնածուին: Հանրապետականներին դիմադրող առայժմ երեւում է միայն ՀՅԴ-ի տեսքով, սակայն, ինչպէս ասում են, մէկ ՀՅԴ-ով գարուն չի գայ: Սակայն Ռոբերտ Բոչարեանը Ռոբերտ Բոչարեան չի լինի, եթէ մոռացության մատնած լինի իր այն թեւաւոր խօսքը, որ չի պատրաստում դառնալ «Հայաստանի Հանրապետության ամենաերիտասարդ թոշակաւոր», եւ «պառզա» պահելուց յետոյ չփորձի վերստանձնել թելադրող դիրքերը:

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**  
**«ԻՍԿԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ»**

**ԹԱՆԿԱՑՈՒՄՆԵՐ ՅԱՆՈՒՆ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՖՈՆԴԻ**

Ակնյալ է, որ համատարած թանկացումները կարգին վախեցրել են իշխանութիւններին: Ընդ որում, վախեցրել են ոչ միայն այն պատճառով, որ ցանկացած նորմալ մարդ, ամէն օր խանութ մտնելով եւ գնելին ծանօթանալով, մտքում կամ բարձրաձայն հայհոյում է իշխանութիւններին, այլեւ այն պատճառով, որ ժողովուրդը լաւ էլ հասկացել է, թէ որն է այդ թանկացումների իրական պատճառը:

Երեւի չկայ մէկը, որ նկատած չլինի գարմանայի մի օրինաչափութիւն՝ ամէն անգամ, երբ իշխանութիւնները գանգուածաբար ընտրակաշառք են բաժանում, մի երկու ամիս չանցած՝ «համաշխարհային շուկայում թանկացումներ են նկատուում»: Իսկ այս անգամ «համաշխարհային շուկայի» թանկացումներն անհամեմատ աւելի էական են այն պատճառով, որ առջեւում նոր ընտրություններ են:

Ըստ տարրական տրամաբանութեան, Սերժ Սարգսեանը պիտի փորձեր հերքել այս ամէնը եւ քիչ-քիչ շատից հիմնաւորուած բացատրություններ տալ: Նա այդպէս էլ արեց: Այսինքն՝ փորձեց հերքել: Միանգամից ասե՛ք՝ փորձը ձախողուեց: Աւելին. այնքան խճճուեց, որ անկախ իրենից ձեռք հակառակն ապացուցեց:

Դատեցէք ինքներդ: Սերժ Սարգսեանը ԱԺ ամբիոնից յայտարարեց բառացիօրէն հետեւեալը. «Կառավարութիւնն էլ է անհանգստացած այս պրոցէսով: Ուսումնասիրում ենք իրավիճակը, բայց պետք է ասեմ, որ այդ ուսումնասիրությունները տեղաւորում են մեր ընդհանուր քաղաքականութեան մէջ՝ ստուերի կրճատման, բիզնեսի թափանցիկութեան հետ կապուած հարցերում»: Այլ կերպ ասած, Սերժ Սարգսեանին հարցնում են, թէ ինչո՞ւ են ապրանքները թանկանում, ու նա իսկոյն սկսում է խօսել ստուերի կրճատման մասին: Այսինքն՝ «մենք երկուսուկէս մի լիարդանոց բիւջէ ենք ներկայացրել ու հիմա ստիպուած պիտի լինենք որոշ չափով կրճատել ստուերը, նրանք էլ ապրանքները թանկացնում են»: Ըստ էութեան սա նշանակում է, որ աննորմալ թերեւոր յարկերը յարկաւորները մինչեւ հիմա գործել են ստուերում: Այսինքն՝ տեղի է ունեցել քրէական յանցագործություն: Իսկ ո՞վ է պատասխանատու դրա համար: Ձեռք է. ՀՀ նախագահ Ռոբերտ Բոչարեանը եւ ՀՀ վարչապետ Սերժ Սարգսեանը: Հիմա Սերժ Սարգսեանը ուզում է հարցը ներկայացնել այնպէս, թէ իբր ապրանքների թանկացումը վկայում է կոռուպցիայի դէմ իր մղած անհաշտ պայքարի մասին: Մի հարցնող լինի՝ իսկ ո՞վ է Հայաստանում այնպիսի համակարգ սարքել, որ Հայաստան ներկրուող սննդամթերքը կենտրոնացած լինի 2-3 հոգու ձեռքում: Եթէ նորմալ տնտեսական մրցակցություն լինէր, բիզնեսմեններն էլ «նալոգ»

չտային իշխանութիւններին, այսօր այսպիսի վիճակ չէր լինի:

Բայց չկարծէք, թէ Սերժ Սարգսեանն այսքանով բաւարարուած է: Սովորութեան համաձայն նա դիմում է պարզ շանտաժի. «Ովքեր ստանան գերշնչութիւնը՝ շատ աւելի շատ հարկեր կը վճարեն, այլ ինդիւրների առջեւ կը կանգնեն»: Աւելի շատ հարկերը հասկացանք, իսկ «այլ ինդիւրները» որո՞նք են: Այսինքն, Սերժ Սարգսեանը դէմ չէ, որ գործարարները ժողովրդի հաշուին գերշնչութիւն ստանան (թէեւ պետութիւնը պարտաւոր է պայքարել դրա դէմ): Նա պարզապէս ասում է՝ եթէ գերշնչութիւնը էք ստանում, «այլ ինդիւրներն» էլ լուծէք (այսինքն՝ իմ փայլ տուէք): Հիմա հարցն այլ կերպ դնենք: Կարո՞ղ է արդեօք Սերժ Սարգսեանը փոխել իրավիճակը: Ոչ, չի կարող, որովհետեւ սա իր ստեղծած կրիմինալ համակարգն է, որտեղ տնտեսական հարցերը լուծուած են ոչ թէ օրէնքով, այլ «ճշդով»: Նա չի կարող քանդել այն համակարգը, որի շնորհիւ ինքը գոյատեւում է: Պարզապէս ժողովուրդը պիտի շատ յստակ գիտակցի, որ ամէն օր ինքը հաց, կարագ, ձեթ, շաքարաւազ եւ այլն գնելիս վճարում է ոչ միայն հացի, կարագի, ձեթի եւ շաքարաւազի, այլեւ Սերժի ջրակի, Սաշիկի ամերիկեան բիզնեսի եւ առաջիկայում բաժանուելիք ընտրակաշառքի համար: Միջազգային գներն այստեղ ոչ մի կապ չունեն:

**Յ.Գ. Ի դէպ, եթէ ուշադիր նայէք, թէ կոնկրետ որ ապրանքատեսակներն են թանկանում, կարող էք յստակ իմանալ, թէ յատկապէս որ օլիգարխի վրայ է Սերժն ամենամեծ «նալոգը» դրել: Բայց սա արդէն այլ պատմութիւն է:**

**ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ**  
**«ԼՐԱԳԻՐ»**

**ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Մրջամի

ԽՄԲԱԳՐ՝  
ՏՕԹԱ ՍՐՇԱԿ ՊԱՁԱՆԾԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝  
ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՊԱԻԹԵԱՆ

Գեո. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797- 6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid at Pasadena CA.  
Please Send Address Change To MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԲԵՄՆԻ ԿՂԶԵԱԿԸ**

Անհետ, բայց յուսանք՝ ոչ անվերադարձ անցել են այն ժամանակները, երբ Հայաստանը համարուած էր Անդրկովկասի ժողովրդավարական կղզեակ: Այն Հայաստանը, որին աշխարհը «ժողովրդավարութեան կղզեակ» էր անուանում, մեր լեքսիկոնով անուանուեց «խաւարի երկիր»:

Այսօր շատ ենք խօսում Զարաբաղեան պատերազմում հայերիս տարած աննախադէպ ու կարեւորագոյն յաղթանակի մասին: Խօսում ենք ոչ միայն շարքային քաղաքացիներս, այլեւ քաղաքական ուժերը: Այդ յաղթանակը դաշնակցութիւնն իրենն է համարում՝ բոլորին հաւատացնելով, որ այդ յաղթանակի մէջ ամենամեծ լուծման իրենցն է: ԱԺՄ-ն ու վազգէնամանուկեանականները գտնում են, որ ամենաորոշիւ վազգէն Մանուկեանի լուծման էր: Երկրպագաները վազգէն Սարգսեանի դերն են համարում ամենավճռորոշը:

Եթէ լսես այս բոլորին, մի պահ կը թուայ, թէ այդ յաղթանակի մէջ բոլորը վաստակ ունեն, բացի մէկից՝ երկիր գլխաւոր ու գերագոյն հրամանատար Լեւոն Տէր-Պետրոսեանից: Աւելին. յաղթանակ տարած գլխաւոր հրամանատարը մեղադրուել ու մեղադրուած է պարտուողական գաղափարախօսութեան մէջ:

Եւ հենց շօշափուում է Տէր-Պետրոսեանի անունը, անմիջապէս հրապարակ է նետուում «անխոցելի» բացատրությունը, թէ մենք Զարաբաղեան պատերազմում յաղթեցինք աշխարհի ու յատկապէս Ռուսաստանի աջակցութեան շնորհիւ: Ոչ ոք այդ պահին չի կարեւորում, թէ ինչու պիտի աշխարհն ու Ռուսաստանը ձեռք-ձեռքի տուած աջակցէին, օրինակ, դաշնակցութեանը կամ առանձին վերցրած որեւէ վազգէնի՝ Մանուկեան կամ Սարգսեան:

Իսկ այն, որ իննսուներանգների առաջին կէսին Հայաստանը

«ժողովրդավարութեան կղզեակ» էր համարուած, գոնէ այդ հարցում առաջին նախագահի լուծման եղե՞լ է: Եւ եթէ Հայաստանն այն ժամանակ «ժողովրդավարութեան կղզեակ» չլինէր, արդեօք առաջադէմ աշխարհն ու այն ժամանակուայ ժողովրդավարական Ռուսաստանը կ'աջակցէին Հայաստանին:

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**  
**«ՏԱՐԵԳԻՐ»**

ԼՈՒՐԵՐ

ԴԱԻԻԹ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ ԶԻ ԲԱՑԱՌՈՒՄ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՊԸ» ԴԱՏԱԻՈՐ ՕՐԱՆԵԱՆԻ ՆԿԱՏԱՄԲ ՍԿՍՈՒԱԾ ԿԱՐՈՅԹՈՒՄ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Եւրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի Ազգային ժողովի պատուիրակության ղեկավար, արդարադատության նախկին նախարար, խորհրդարանի պետաիրաւական հարցերի մշտական յանձնաժողովի ղեկավար Դաւիթ Յարուժիկեանը երկուշաբթի օրը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում անդրադարձաւ Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատենանի դատաւոր Պարգեւ Օհանեանի սկսած կարգապահական վարույթին եւ «Ռոնէալ Արմենիա» ընկերութեան ղեկավարների նկատմամբ դատաւարութեանը:



Արդարադատութեան նախկին նախարար Դաւիթ Յարուժիկեան

Գազիկ Յակոբեանի նկատմամբ խափանման միջոցը փոխելուն վերաբերող հարցին, Յարուժիկեանը ասաց. - «Դատարանը կ'որոշի»:

«Ինչ վերաբերում է դատաւորի նկատմամբ կարգապահական պատասխանատուութեան միջոցներ գործադրելուն, այսօր օրէնքով արուած է առաւելագոյնը: Որպէսզի դատաւորը լինի առաւելագոյն պաշտպանուած», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Յարուժիկեանը: - «Պահը, ինձ թւում է, յաջող պահ է, եւ, իսկապէս, մտահոգութեան տեղ է տալիս, որովհետեւ այն տպաւորութիւն է ստեղծում առնուազն քաղաքական կապի, ինչը, դարձեալ, ես չեմ կարող ո'չ բացառել հարիւր տոկոսով, ո'չ պնդել: Որովհետեւ ուղղակի դրա մասին որեւէ տեղեկութիւն չունեմ»:

Պատասխանելով «Ռոնէալ Արմենիա» ընկերութեան նախագահ

ԿԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ՝ ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ԱԺՄ-ն առաջիկայ նախագահական ընտրութիւններին կը մասնակցի սեփական թեկնածուով: Հոկտեմբեր 7-ին տեղի ունեցած ԱԺՄ խորհրդի նիստում կուսակցութեան խորհուրդը երաշխաւորել է կուսակցութեան նախագահի՝ Վազգէն Մանուկեանի թեկնածութիւնը:



ԱԺՄ կուսակցութեան նախագահ Վազգէն Մանուկեան

Արդեօք ԱԺՄ-ն ունի մարդկային բաւարար ռեսուրսները ընտրութիւններին մասնակցելու եւ յաղթելու համար՝ հարցին Վազգէն Մանուկեանը պատասխանել է, թէ մարդկային ռեսուրսը մեծ մասամբ դժուարութիւն չի առաջացնում, եթէ ունեն երկու այլ ռեսուրսներ:

Առաջինը, ըստ նրա, ոգեւորութեան եւ միասնականութեան ռեսուրսն է, երբ հասարակութիւնը քո հետ է, ու քո կողքին գտնուող մարդկանց քանակը կրկնապատկուում, եռապատկուում է: Երկրորդ ռեսուրսը ֆինանսականն է, որը. «Նոյնպէս կախուած է քո նկատմամբ մարդկանց հաւատարմութիւնը: Երբ դու առաջ ես գնում մարդիկ կանգնած ես, ոչ ոք քեզ չի օգնի»:

Խորհրդի նիստին մասնակցել է նաեւ ԱԺԴ նախագահ, նախկին ԱԺՄ-ական Արշակ Սաղոյեանը, ով, պատասխանելով լրագրողների հարցերին, ասաց. «Եթէ առանցքային թեկնածուի հարցը լուծուի, բնական է, որ մենք բոլորս կը պաշտպանենք այդ թեկնածուին, լինի դա Վազգէն Մանուկեանը»:

նը, թէ մէկ այլ թեկնածու»: Կուսակցութեան խորհուրդը որոշել է շարունակել բանակցութիւնները միասնական քաղաքական ընդդիմադիր դաշտ ստեղծելու ուղղութեամբ՝ «չբացառելով, որ այդ բանակցութիւնները կարող են շարունակուել թեկնածուների առաջադրուածից յետոյ, մինչեւ նախագահի ընտրութեան առաջին փուլը»: Իսկ թէ ո՞ր ընդդիմադիր ուժի հետ է ԱԺՄ-ն պատրաստ միասնական բեւեռ կազմել, յայտնի չէ:

Կուսակցութեան մամուլի քարտուղար Գոհար Վեգիրեանը «Ա1+»-ին փոխանցեց, որ որեւէ քաղաքական ուժի անուն նիստի ժամանակ չի նշուել. «Խօսքը այն քաղաքական ուժերի մասին է, ովքեր քաղաքականապէս հասուն են, ընդդիմադիր են եւ ուզում են երկրում փոփոխութիւններ լինեն», - ասաց Գոհար Վեգիրեանը:

«ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ» ՊԱՏԳԱՄԱԻՈՐ ՍՏԵՓԱՆ ՍԱՖԱՐԵԱՆԸ ԱՅՅԵԼԵԼ Է ՊԱՔՈՒ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ԱԺ պատգամաւոր Վիկտոր Դալլաբեանի՝ Պաքու կատարած այցից 7 տարի յետոյ Պաքու այցելեց «Ժառանգութեան» պատգամաւոր Ստեփան Սաֆարեանը:



«Ժառանգութիւն» կուսակցութեան անդամ Ստեփան Սաֆարեան

«Շատերն էին ինձ խորհուրդ տալիս Պաքու չգնալ, սակայն սա հերթական հնարաւորութիւն էր՝ տարիներ շարունակ ընդհատուած կապը վերականգնելու համար: Մեզ իսկապէս անհրաժեշտ են երկխօսութեան տարբեր հարթութիւններ՝ մեր ինդիւրները քննարկելու համար», - Պաքուից վերադառնալուց անմիջապէս յետոյ ասաց Ստեփան Սաֆարեանը: Պաքուում նա մասնակցել է Սեւծովեան տնտեսական համագործակցութեան յանձնաժողովի աշխատանքներին, «Կեանքի որակի» բարելաւումը Սեւծովեան տնտեսական համագործակցութեան անդամ երկրներում» գեկոյցի պատրաստմանը: Ստեփան Սաֆարեանին յաջողուել է շտկումներ մտցնել գեկոյցում:

որոնց միջոցով իր այցի լուսաբանումը նրա գարմացնում են եւ ինչոր տեղ հիասթափեցնում. «Հայկական որոշ լրատուամիջոցներ չաչտնել են, որ ես Պաքուում ելոյթ չեմ ունեցել: Որոնք են նրանց ինֆորմացիոն աղբիւրները: Պաքուում կայացած յանձնաժողովի նիստերը դժուարիկ էին»:

Հայաստանին վերաբերող գեկոյցը պատրաստել է ատրպէյճանցի, եւ հայկական կողմը նրան նախապէս որեւէ ինֆորմացիա չի տրամադրել: Զեկոյցը Ստեփան Սաֆարեանը այսպէս գնահատեց. «Ես այն համարում եմ անսեռ: Նա ՀՀ-ի վերաբերեալ միջազգային կառուցների տարբեր գեկոյցներից հատուածներ էր վերցրել: Հայկական կողմի ինդիւրն է պատրաստող Ալիեւային ինֆորմացիա տրամադրել: Ի պատիւ Ալիեւայի՝ Հայաստանին վերաբերող գեկոյցը մեր դէմ չէ, սակայն այն կարող էր լինել շատ աւելի լաւը»:

Պաքուում եղած ընթացքում Ստեփան Սաֆարեանը հետեւել է ատրպէյճանական լրատուամիջոցներին, յատկապէս հանրային հեռուստատեսութեան լուրերին եւ առանց լեզուին տիրապետելու, հասկացել է, որ ռազմատենչ յայտարարութիւնները շարունակուում են՝ հայերին անուանում են «դուշման» եւ անընդհատ ցուցադրում են Ղարաբաղի տարածքները՝ Ֆիզուլին, Աղդամը եւ մնացած տարածքները: Ի տարբերութիւն շատ քաղաքական գործիչների, Ստե-

ՌԱՖԱՅԷԼ ՂԱԶԱՐԵԱՆ. «ԵԹԸ ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԻՑ ԵՐԿՈՒ ԹԵԿՆԱԾՈՒ ԼԻՆԻ, ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՐՏՈՒԻ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Ղարաբաղ» կոմիտէի անդամ, ակադեմիկոս Ռաֆայէլ Ղազարեանը օրը համոզմունք չաչտնեց, թէ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը նախագահի թեկնածու առաջադրուելուց առաջ պէտք է «շատ ուշադիր, առանց բթացնելու իր սթափութիւնը եւ զգոնութիւնը», ինքը գայ այդ եզրակացութեան:

հիւանդ նախկին գործընկերոջը»: «Երկիրը օրհասական վիճակում է», - շարունակեց նա: - «Մենք պէտք է մոռանանք փոխադարձ վիրաւորանքները, փոխադարձ մեղադրանքները... Իսկ այդ իմաստով Լեւոնի վիճակը շատ աւելի ծանր է, որովհետեւ այս բոլոր տարիներին ես եղել եմ նրա ամենադաժան քննադատը: Եւ նա պէտք է այդ բոլորը ներէր, վեր կանգնէր դրանից: Եւ, ինձ թւում է, նա այդ իմաստով, այդպէս էլ վարուեց»:

«Մինչեւ ելոյթ չունենայ եւ չհանդիպի ժողովրդի լայն զանգուածների հետ եւ չտեսնի արձագանքը, նա իր համար վճիռ չի ընդունի», - յաւելեց Ղազարեանը: Լեւոն Տէր-Պետրոսեանը եւ Ազգային ժողովի նախկին նախագահ Բաբեկ Արարբեցեանը այցելել էին Ռաֆայէլ Ղազարեանին:

Ղազարեանի կարծիքով, նախկին նախագահը կ'առաջադրուի միայն մէկ դէպքում՝ եթէ «ժողովրդական պահանջ տեսնի»:

Երեք ժամից աւելի տեւած հանդիպման վերաբերեալ Ղազարեանը ասաց. - «Նախկին հին ընկերների, մարտնչներների, Շարժման ակունքում կանգնած ընկերների այցելութիւններն էր իրենց փան Սաֆարեանն պատասխանելով «Ա1+»-ի հարցին՝ վստահեցրեց, որ Ատրպէյճանի ռազմատենչ յայտարարութիւնները ներքին սպառման համար չեն. «Նման յայտարարութեան համար ես հիմք ունեմ»:

Յիշեցմանը, որ Ազգային ժողովրդավարական Միութեան (ԱԺՄ) նախագահ Վազգէն Մանուկեանը արդէն յայտարարել է իր՝ նախագահի թեկնածու առաջադրուելու մտադրութեան մասին, Ղազարեանը արձագանքեց. - «Ես վշտացած եմ այն իրավիճակից, որը ստեղծուել է ընդդիմութեան դաշտում: Այնպիսի տպաւորութիւն է, որ հիմա աւելի քաղաքակիրթ են իրենց պահում իշխանական լազարում, քան ընդդիմադիր լազարում: Թէեւ ընդդիմութիւնը ոչ մի բարոյական դրուում չունի հիմա մեծ-մեծ խօսելու: Նա, փաստօրէն, տապալեց ամէն ինչ»:

Բոլոր դէպքերում Ստեփան Սաֆարեանը ուրախ է Պաքուում լինելու համար եւ գտնում է, որ լաւ կը լինի, որ նման առիթ ունենան երկու կողմերից էլ: Ի դէպ, Ստեփան Սաֆարեանը նկատեց, որ Հայաստանից Պաքու միշտ գործուղուում են ընդդիմութեան ներկայացուցիչներ:

**ԼՈՒՐԵՐ**

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՂԱԶԱՐԵԱՆ. «ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆԻՆ ԻՄ ՈՒՂԱՐԿԱԾ ԲՈԼՈՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՆ»**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
«Գուժարները, որ ես ուղարկել եմ Ալեքսանդր Արզումանեանին, բոլորը ունեն օրինական ծագում», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հեռախօսակցութեան ընթացքում հարցազրույցում հարցազրույցի մասնակցակ հայազգի գործարար Ալեքսանդր Աղազարեանը:

Աղազարեանն էր Հայաստանի նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանեանին գումար ուղարկել, իսկ վերջինս մեղադրուում է փողերի լուսացման մէջ:

Հայաստանի գլխաւոր դատախազութեան խնդրանքով Ռուսաստանի դատախազութիւնն ուսումնասիրում է Ալեքսանդր Աղազարեանի ֆինանսական գործերը՝ թէ որքանով է նա կատարում իր հարկային պարտաւորութիւնները, եւ արդեօք նրա եկամուտները օրինակահանձնապարհով են ձեռք բերուել:

Ռուսաստանի գլխաւոր դատախազ Եուրի Չայկան, այսօր Երեւանում պատասխանելով Աղազարեանի գործի վերաբերեալ լրագրողների հարցին, ասել էր. - «Գործը նախաքննութեան փուլում է, եւ աւարտից չեստոյ արդիւնքների մասին կը տեղեկացնենք կողմերին»:

Հայաստանի գլխաւոր դատախազ Աղոլան Յովսէփեանը յաւելել էր, որ առաջիկայ օրերի ընթացքում մանրամասն տեղեկութիւններ կը ստացուեն եւ թոյլատրելիութեան սահմաններում կը փոխանցուեն:

Թեան սահմաններում կը փոխանցուեն լրատուամիջոցներին ու հասարակութեանը:

Ալեքսանդր Աղազարեանը հաստատեց, որ Ռուսաստանի դատախազութեան աշխատակիցներն իր հետ գրուցել են. - «Իհարկէ, ինձ կանչել են եւ ինձ հետ գրուցներ են ունեցել: Հետաքննութեան շրջանակներում ես պատասխանել եմ հարցերին, որոնք իրենց հետաքրքրել են»:

Հայազգի գործարարը Ռուսաստանի իրաւապահներին յայտնել է եւ այսօր կրկին պնդեց. - «Հարկերը իմ կողմից բոլորը մուծուած են, եւ գումարները, որ ես ուղարկել եմ Ալեքսանդր Արզումանեանին, բոլորը ունեն օրինական ծագում: Իսկ ի՞նչ ընթացքում է դատախազութեան հետաքննութիւնը՝ ես, ճիշդն ասած, չգիտեմ, որովհետեւ ինձ այդ մասին չեն գեղուցում եւ ինձ այդ թեմայով չեն անհանգստացնում»:

Ալեքսանդր Աղազարեանի կարծիքով, պարզապէս «հայկական դատախազութիւնը լուրջ նիւթեր չունի այս գործը շարունակելու համար եւ դիմել է ռուսական դատախազութեանը, որպէսզի նրանք կարողանան գտնել ինչ-որ կեղտոտ բաներ իմ նկատմամբ, բայց դա հնարաւոր չէ, որովհետեւ Ռուսաստանում, յամենայն դէպս, գործում է օրէնքը, եւ, ինձ թւում է, ոչ մի պատուէր չեն կարող կատարել»:

**ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ ԵՐԱՄԻՈՒԹԵԱՆԸ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԱԻԵԼԻ ՄԵԾ ԾՆՇՈՒՄ ԳՈՐԾԱԴԻՆԵԼ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎՐԱՅ**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանեանը Եւրախորհրդարանի արտաքին կապերի յանձնաժողովի նիստում Երեքշաբթի, Հոկտեմբեր 9-ին ունեցած ելոյթում Եւրամիութեանը կոչ է արել ճնշում գործադրել թուրքիայի վրայ, որպէսզի այդ երկիրը բացի Հայաստանի հետ սահմանը, եւ ընդգծել է, որ պաշտօնական Երեւանը որեւէ նախապայման չունի Անկարայի հետ յարաբերութիւնները կարգաւորելու համար:



Դիւնքները:

Ընդունելով հանդերձ, որ երկու երկրների յարաբերութիւններում գոյութիւն ունեն չկարգաւորուած հարցեր, Օսկանեանը միաժամանակ շեշտել է երկխօսութիւնը խոչընդոտելու անթոյլատրելիութիւնը:

Հայաստանի արտգործնախարարը կոչ է արել Եւրախորհրդարանի յանձնաժողովին թուրքիայի վրայ աւելի մեծ ճնշում գործադրել, որպէսզի այդ երկիրը երկխօսութիւն սկսի Հայաստանի հետ: Նա ընդգծել է, որ շրջափակուած Հայաստանը յատկապէս շահագրգռուած է, որպէսզի թուրքիան բացի 1990-ականներից ի վեր փակ պահուող սահմանը:

«Սահմանների բացումը միայն Հայաստանի համար չէ կարելու, դա կարելու է նաեւ Եւրամիութեան համար, որովհետեւ թուրքիան բնական կամուրջ է Կովկասի եւ Եւրոպայի, Եւրամիութեան միջեւ, եւ առանց մեր տարածաշրջանի նկատմամբ թուրքիայի հաւասարակշիռ եւ անաչտ քաղաքականութեան մեր յարաբերութիւնները այնքան արդիւնաւէտ չեն, որքան դրանք կարող էին լինել թուրքիայի եւ Հայաստանի բնական յարաբերութիւնների պայմաններում», - յայտարարել է Վարդան Օսկանեանը:

Հայաստանի արտգործնախարարի ելոյթը որոշակի ըմբռնում է գտել ներկայ խորհրդարանականների շրջանում:

Հարաւային Կովկասի հարցերով Եւրախորհրդարանի պատուիրակութեան նախագահ Մարի Էն Իսլեր Բեգինը, մասնաւորապէս, յայտարարել է, որ Եւրամիութիւնը բաւարար ճնշում չի գործադրում թուրքիայի վրայ այդ երկրի անդամակցութեան բանակցութիւնների գործընթացում:

Իսլեր Բեգինը շեշտել է, որ սահմանների բացումը մեծապէս շահաւէտ կը լինի երկու կողմերի համար էլ:

Եւրախորհրդարանը նախատեսում է այս հարցի շուրջ լուծումներ անցկացնել Նոյեմբերի սկզբին, երբ կը հրապարակուեն նաեւ շրջափակման հետեւանքներին վերաբերող ուսումնասիրութիւնների ար-

Օսկանեանը քննադատել է Եւրամիութեանը այս խնդրի շուրջ ցուցաբերած «չէզոքութեան» համար: Նա ասել է, որ այդ դիրքորոշումը հասկանալի է, սակայն «տեղին չէ»:

Նա յայտարարել է, որ եթէ Հայաստանը նախապայմաններ չունի երկու երկրների միջեւ յարաբերութիւնների սերտացման հարցում, ապա թուրքիան ունի: Նախարարը հերքել է պաշտօնական Անկարայի մտահոգութիւնը, թէ Հայաստանը տարածքային պահանջներ ունի իր նկատմամբ, ասելով, որ երկու երկրների միջեւ սահմանը «պարզորոշ նշուած է» եւ համապատասխանում է 1922 թուականին թուրքիայի եւ Խորհրդային Միութեան միջեւ կնքուած պայմանագրով հաստատուած սահմաններին:

Օսկանեանն ընդգծել է նաեւ, որ Լեռնային Ղարաբաղի հարցով հայ-ստորաբնակչական հակամարտութիւնում թուրքիան ներգրաւուած չէ, եւ պաշտօնական Անկարան այն չպիտք է դիտարկել երկկողմ յարաբերութիւնների համատեքստում:

Նա նաեւ «բացարձակապէս անպատեհ» է համարել Լեռնային Ղարաբաղի խնդիրը ՄԱԿ-ի շրջանակներում քննարկելու՝ Ատրպէյճանի առաջարկը, յայտարարելով, որ Հայաստանի կարծիքով, ԵԱՀԿ-ի Մինսկի խումբը հակամարտութեան կարգաւորման բանակցութիւնների միակ պատշաճ տեղն է:

Օսկանեանը ասել է, որ ԵԱՀԿ-ի շրջանակներում բանակցութիւնները կարգաւորման լուրջ հեռանկարներ են բացառուել, նշելով, որ հակամարտութեան կարգաւորման «հիմնարար սկզբունքներին» վերաբերող երեք էջանոց փաստաթղթում ընդամենը չորս հարց է մտնում չհամաձայնեցուած: Նշելով, որ երկու երկրների ղեկավարները առայժմ չեն կարողացել փոխհամաձայնութեան գալ այդ չորս հարցերի շուրջ, նախարարը յոյս է յայտնել, որ տարածաշրջանում թիւնները կարող են յաղթահարուել մինչեւ 2008 թուականի Փետրուարին Հայաստանում անցկացուելիք նախագահական ընտրութիւնները:

ՀՅԴ-ի, ՀԺԿ-ի, «Հանրապետութիւն» եւ «Ազգային Միաբանութիւն» կուսակցութիւններու ղեկավարներուն հետ: Ծրագրուած է նաեւ առաջին նախագահի հանդիպումը «Օրինաց երկիր» կուսակցութեան ղեկավար Արթուր Բաղդասարեանի հետ:

**ՔՆՆԱՐԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՋ**

Շարունակուած էջ 1-էն

Ատէմ Շիֆի կողմէ:

Բացման խօսք կատարելով գոնկրէսական Շիֆի յայտնեց, որ պէտք է Հայաստանին նայիլ աւողջ քննադատական աչքով, երկրի առաւել զարգացման համար: Քննարկումի մասնակիցներէն Ազգային Դեմոկրատական Ինստիտուտի ղեկավարներէն Դոկտ. Լորա ձէնուիթ յայտնեց թէ, իրենց կողմէ Հայաստանի մէջ կատարուած հանրային կարծիքի հարցախոյզը ցոյց կու տայ, որ ժողովուրդի 68 տոկոսի կարծիքով Մայիսին տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւնները ազատ եւ արդար չէին: Նոյն հարցախոյզի համաձայն, 60 տոկոսը հաւատք չունի որ, յառաջիկայ նախագահական ընտրութիւնները բարելաւում պիտի արձանագրեն:

Խօսողներու կարծիքով, Հայաստան թէեւ 1991 թուականի անկախութենէն ասդին հազիւ ոտ-

քի կանգնող ժողովրդավարութիւն է, սակայն փոխախտն ու կաշառակերութիւնը տարածուած է կառավարութենէն ներս եւ ժողովուրդը ընդհանրապէս թերահաւատ է դատական մարմիններուն նկատմամբ:

Քննարկումին կը մասնակցէին նաեւ UCLA համալսարանի Հայկական Ամպիոնի վարիչ Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան, Հայկական Միացեալ Ֆոնտի նախագահ Յարութ Սասունեան, Հայաստանի Հանրապետութեան Լոս Անձելըսի աւագ հիւպատոսի փոխանորդ Յարութիւն Գոնոյեան եւ փոխ հիւպատոս Սահակ Սարգսեան եւ Մինտի Շէփըրտ, որ կը ներկայացնէր արտասահմանեան սեփական ներդրումները ընկերակցութիւնը:

Ելոյթ ունեցողներու ընդհանուր կարծիքը այն էր թէ, Հայաստանի մէջ ժողովրդավարութեան զարգացումը յառաջ կ'ընթանայ, սակայն շատ դանդաղ ու հանդիպելով բազմաթիւ խոչընդոտներու:

**ԼԵՒՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ԵՒ ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ**

Շարունակուած էջ 1-էն

անձնական յարաբերութիւնները վերականգնուեցին՝ աւելի հեշտ կը լինի», - աւելցուցած է Մանուկեան:

1993-ին պաշտպանութեան նախարարի պաշտօնէն հեռանալէն ետք, Մանուկեան չէր հանդիպած Տէր-Պետրոսեանի հետ:

Ալեքսանդր Արզումանեան իր կարգին ըսած է. «Արդիւնքների մասին, թերեւս, շուտ է խօսելը: Ինքը փաստը շատ կարեւոր է: Շատ կարեւոր է, երբ այսօր փասնագ-

ուած է Հայաստանի անկախութիւնը, որ այդ անկախութեան ակունքներում կանգնած երկու քաղաքական գործիչ, դարաբաղեան շարժման ղեկավարները միասին հանդէս գան»:

Որու շուրջ պէտք է համախմբուել հարցին, Արզումանեան պատասխանած է. - «Ես՝ լինելով Լեւոն Տէր-Պետրոսեանի թիմակից, պարզ է, որ ամէն կերպ նպատակելու եմ Լեւոն Տէր-Պետրոսեանի շուրջ համախմբմանը: Սակայն ես գտնում եմ, որ թէ՛ Տէր-Պետրոսեանը, թէ՛ Վազգէն Մանուկեանը աւելի շատ

մտահոգ են ոչ թէ իրենց անձի ապագայով, այլ Հայաստանի Հանրապետութեան ապագայով, եւ նրանք կ'առաջնորդուեն հենց Հայաստանի շահով»:

Տէր-Պետրոսեան արդէն հանդիպումներ ունեցած է ՄԴՀԿ-ի,

**ՄԱՍԻՍ**  
**ԱՄԵՆԱՎԱՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ**  
**ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

ՇՐՋԱԶՐՈՅՑ

# ՍԴՅԿԻ ԱՏԵՆԱՊԵՏՈՒՅԻ ԼԻԴԻՄԻԼԱ ՍԱՐԳՍԵԱՆ »ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆ ԵՆ«

Հնչակեան կուսակցութեան ատենապետուհի Լիդիա Սարգսեանի հետ մեր հարցազրոյցը Անկախութեան տօնից ընդամէնը օրեր առաջ էինք արել: Ու թէպէտ այս կարճ ընթացքում «խառնակ ջրեր» հոսեցին, ինչի առիթով եւս հետաքրքիր կը լինէր լսել նրա դիրքորոշումը, այդուհանդերձ, կարծում ենք, այս տարբերակն էլ է ստացուել:

- Տիկին Լիդիա, առաջին հարցս այնպէս ձեւակերպեմ. դուք որոնք էք համարում այս պահին Հայաստանի առջեւ ծառայած մարտահրաւերները եւ ինչ էք կարծում՝ արդե՞օք դրանց լուծման համար հնչակեան գաղափարախօսութիւնը կամ սոցիալ - դեմոկրատիան առիտարակ է: »յարմար բանալի եմ:

- Առաջնային խնդիրը Հայաստանի համար արմատական փոփոխութիւններն են քաղաքական - տնտեսական դաշտում եւ հենց իշխանութիւնների մէջ: Ի միջի այլոց, վերջերս իշխանական թեւից մի պաշտօնեայ, որի հետ առիթ ունեցայ հանդիպելու, ասաց հետեւեալը՝ գիտէ՞ք ինչքան ուզում էք քարկոծէք, միեւնոյն է, պրոգրեսը առաջ է գնում, մենք եթէ ոչինչ էլ չանենք դա վերագրուելու է մեր իշխանութիւններին: Ես կ'ասէի՝ թոյլ տուէք չհամաձայնել: Այո իրօք, պրոգրեսն առաջ է գնում եւ այն կանգնեցնել ոչ ոք ի վիճակի չէ, որովհետեւ մենք ապրում ենք, իսկ կեանքն ինքնին զարգանում է: Բայց որ այդ պրոգրեսը իշխանութիւններին է վերագրուում, չարաչար սխալում են: Իւրաքանչիւր մտածող մարդ հասկանում է, թէ դա ինչի արդիւնք է. դա արտա-

սահմանեան ներդրումների, կամ տեղացի գործարարի մի փոքր աշխուժացման, կամ արտասահմանեան ֆոնդերի, որոնց հաշուին որոշակի աշխատատեղեր են ստեղծուում: Նաեւ սոցիալական վիճակում որոշակի փոփոխութիւններն են նկատուում, սակայն դա չի նշանակում, որ երկիրն առաջընթաց է ապրում, որովհետեւ նոյն այդ ֆոնդերը կամ արտասահմանեան ներդրումներն այսօր կան, վաղը կարող են չլինել, մեր գործարարները, եթէ չաջանում են աւելի նեղ վիճակում, կարող են իրենց գումարի մեծ մասը երկրից հանել, չմնալ այստեղ, այդ օֆիսները, որոնք այսօր բացուում են, վաղը կարող են փակուել: Խոշոր հաշուով իրական պրոգրես կարող էր գրանցուել միայն այն ժամանակ, եթէ պետական որոշակի սեփականութիւն գոյութիւն ունենար, ստրատեգիական օբիեկտներն իրօք երկրին պատկանէին, եւ մենք մեզ աւելի անվտանգ զգայինք, իսկ քաղաքականութեան մէջ Ղարաբաղի հարցի լուծմանն աւելի մօտեցած լինէինք, շրջափակումը բացելու նպատակով իրական աշխատանքներ արուած լինէին: Սրանք բոլորը չկան, եւ այս իմաստով, իհարկէ, ես համարում եմ, որ սոցիալ - դեմոկրատիան կարող է շատ առումներով նաեւ բանալի լինել, ինչու ոչ:

- Ի դէպ, դուք դրսում տուած ձեր վերջին հարցազրոյցներից մէկում նշել էք, որ ցաւօք, չիրականացաւ նաեւ Իրան - Հայաստան գազամուղի միջոցով տրանզիտային երկիր դառնալու մեր յոյսը եւ յաւելել էք, թէ դա էլ ռուսներին տալուց յետոյ Ռուսաստանը, ցաւօք, դեռ երկար կա-



րող է Հայաստանում պէտք եղածից աւելի ամուր դիրքեր զբաղեցնել: Բայց հնչակեանները, չնայած դեռ 1921 - ին այդ երկրում ունեցած իրենց կառոյցների լուծարմանը, աւանդաբար լաւ յարաբերութիւններ են ունեցել Ռուսաստանի հետ: Հիմա ինչպէ՞ս հասկանանք Ձեր միտքը:

- Գիտէ՞ք, ես շատ լաւ հասկանում եմ, որ մենք լրիւ անկախ լինել Ռուսաստանից չենք կարող: Դա ակնյայտ է, որովհետեւ աւելի մօտ ենք պատմական մշակութային կապերով եւ վերջապէս նոյն երկրի մէջ ենք ապրել 70 տարի, հիմա էլ անվտանգութեան հետ կապուած խնդիրներ կան եւ այլն եւ այլն: Ժիշդ էք նաեւ այն հարցում, որ աւանդաբար Հնչակեան կուսակցութիւնն էլ է լաւ յարաբերութիւններ ունեցել Ռուսաստանի հետ: Բայց, դժբախտաբար, ես այսօր տեսնում եմ, որ այդ երկիրը վստահելի գործընկեր չէ մեզ համար: Եւ քանի որ այսպէս թէ այնպէս չէինք

կարող այդ հանգամանքը անտեսել իբր գերտէրութիւն, պէտք չէր նաեւ կապել մեր ձեռ ու ոտը, որ ընդհանրապէս չնչելու հնարաւորութիւն էլ չունենայինք:

- Այսինքն՝ ուզում էք ասել, որ չնայած յայտարարուած կոմպլիմենտար քաղաքականութեանը, »Բացառիկ ընտրութիւն է արուել«՝ յօգուտ Ռուսաստանի:

- Անկասկած: Մենք միայն կարող ենք առաջ գնալ մեր շահերը միւս բոլորի հետ համակցելու, բոլորի հետ համագործակցելով: Բացառիկ ընտրութեան դէպքում, այսպէս թէ այնպէս մենք կորուստներ ենք ունենալու: Լինելով ռուսամէտ կուսակցութիւն մենք այսօր կարողանում ենք դա մի կողմ թողնել եւ երկրի առաջ ծառայած մարտահրաւերները տեսնելով մեր կուսակցութեան դիրքորոշումները ստորադասում ենք երկրի շահերին եւ հետագայ զարգացման խնդիրներին: Ամենատիտուն այն է, որ ի տարբերութիւն այս իշխանութիւնները չունեն սկզբունքային դիրքորոշում եւ իրենց անձնական շահերը գերադասում են պետական շահերից եւ նրանց հիմնական կեցուածքը Ռուսաստանի նկատման ֆորպոստային է: Ստացուում է, որ իշխանութիւնները որդեգրելով այդ կեցուածքը միւս գերտէրութիւններին ասում են. «Հիմա մենք Ռուսաստանի ֆորպոստն ենք, համբերէ՛ք, վաղը Ձերը կը դառնանք», եւ յանուն սեփական իշխանութեան պահպանման, պատրաստ են ամէն ինչ վաճառելու: Ձէր կարելի մեր երկիրը լրիւ

Շաբ.թ էջ 23

## ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ

Նուիրում՝  
**Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ**  
**120 Ամեակին**  
Կազմակերպութեամբ՝  
**ՓԱՐԱՄԱԶ ՄԱՍՆԱԾԻՒՂԻ**



Երեկոյն պիտի խանդավառէ՝  
Լոյստոնէն ժամանած սիրուած երգիչ՝ **ՍԱՄՈՒԷԼ ՎԱՐԴԱՆԵԱՆ**  
Եւ Լոս Անճելոսէն **ՀՐԱԶ ՊՕՂԱՐԵԱՆ** իր նուագախումբով

Շաբաթ 20 Հոկտեմբեր 2007, երեկոյեան ժամը 8:30-ին  
Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ - 1060 N. Allen Ave., Pasadena

ԱՂԳԱՅԻՆ

# ԼԵՒՈՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԱԽԱՍԵՄԻՆ...

## ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Այսօր կ'ուզենք անդրադառնալ մեր հայրենիքի, Հայաստանի քաղաքական, ներքին կացության վրայ, նկատի առած վերջին շրջանի զարգացումները: Այս զարգացումները տեսակ մը նախատրամադրություն են, կամ ենթահող կը ստեղծեն 2008 թվականի նախագահական ընտրություններու մասին, որ ինչպէս նախատեսելի է բոլոր երկիրներու պարագային, նոյնպէս Հայաստանի համար, խիստ կարեւոր կրնան ըլլալ եւ անշուշտ են:

Հետեւեալ գլուխներու տակ կ'ուզենք քննարկել երեւոյթները.

- Տիրող իշխանութեան պարագան:

Լեւոն Տէր Պետրոսեան եւ Դաշնակցութիւն:

- Ընդդիմադրութեան պարագան:

## ՏԻՐՈՂ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Հակառակ այն իրողութեան որ Հայաստանի ներկայ իշխանութիւնները, հանդարտօրէն, ինքնավստահօրէն եւ յաջողութեան լուրջ ակնկալութեամբ կը պատրաստուին նախագահական ընտրութեան, տակաւին, ըստ երեւոյթի, պարտք կը զգան որոշ «ուղեղային լուսցումի» ենթարկելու Հայաստանի եւ արտասահմանի հայ զանգուածները, ի նպաստ Սերբ Սարգսեանի թեկնածութեան: Կասկած չկայ որ, անցեալի բոլոր ընտրութեանց պարագային, ընտրական գործողութիւնները նախապէս որոշուած, ճշդուած եւ բեմադրուած էին, այս մէկը եւս, տրուած ըլլալով անոր կարեւորութիւնը, երկրին իշխանութիւնները ամէն ինչ պիտի ընեն ապահովելու համար իրենց թեկնածուին ընտրութիւնը, այսինքն Սերբ Սարգսեանի ընտրութիւնը: Այս մէկը նաեւ ապահով կը թուի Ռուսաստանի եւ Ամերիկայի կողմէ, երբ Փութին մը իր օրհնութիւնը կու տայ Սերբին եւ Ամերիկան գոհ է ներկայ իշխանութիւններէն:

Ներքին ճակատի վրայ, ինչ կը կատարուի: Յստակ է որ Հայաստանի տնտեսութիւնը եւ անոր բոլոր ճիւղերը իրենց բառերով ըսուած, «մոնապոլիտար» են, այսինքն տնտեսութիւնը սեփականութիւնը դարձած է մի քանի խոշոր գործարարներու: Այս մարդոց ուսերուն

կ'իջնայ նաեւ նախըտրական շրջանի ծախսերը, ի նպաստ իշխանութեան թեկնածուին: Կը խօսուի, հայաստանեան մամուլի համաձայն, 100 միլիոն տոլարներու մասին, որոնք ծախսուեցան խորհրդարանական ընտրութեանց «յաջողութեան» համար: Նաեւ կ'ակնկալուի որ մինչեւ Դեկտեմբեր ամիսը, նոյն գործարարները ժամանակ կ'ունենան իրենց ծախսածը ետ հաւաքելու, եւ գալիք տարուայ առաջին ամիսներուն, տնտեսական «խաղ» կը խաղցուի, գիններու աժանացման տեսակէտէն, ժողովրդի մօտ տրամադրութիւն ստեղծելու համար, ի նպաստ իշխանութեան թեկնածուին: Այս նոյն «խաղը» այս անգամ եւս շատ հաւանական է որ խաղցուի եւ ժողովուրդը ընտրութեան «պատրաստուի»: Այս «խաղը» նոյնպէս կը կատարուի տոլարի արժէքի գնահատման ճամբուն...

Ուրեմն, ներկայիս հանրապետութիւնը կ'ընտրուած է նախագահական ընտրութեանց «անարով»: Իշխող «օլիգարխիան», «գլանը» ամէն ինչ կը կարգադրէ մթնոլորտի կան ճշգրտութեամբ եւ գրեթէ զարմանլի կը թուի որ այլ ոչ ոք, կամ կուսակցութիւններ, տակաւին արտօժակներ կը անուցանեն նախագահական ընտրութեան մասնակցելու համար: Այս մասին խօսելէ առաջ, Հայաստանի քաղաքական կեանքը, որ արդէն «խաղաղած է, չըսելու համար, «անշարժացած», կ'ընթանայ իր միօրինակութեամբ, հիմնահարցերու քննարկման եւ լուծման տեսակէտէն: Ղարաբաղեան հարցը, ինքը, կը սպասէ նախագահական ընտրութեանց արդիւնքին, անշուշտ համաձայնութեամբ Միւսքի խումբին, եւ Ատրպէյճանի նախագահ, Ալիեւին: Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներուն պարբերական հանդիպումները, ճշգրիտ եւ գեղեցիկ կերպով թատերական բեմադրութիւններու կը նմանին, կամ ինչպէս Շէյքսպիր պիտի ըսէր, «բազում աղմուկ վասն ոչինչի»: Անշուշտ երկու նախագահներուն «շահերը» կը համընկնին իրարու: Իսկ ՄԱԿէն ներս, Վ. Ռսկանեան կը «քննադատէ» Ամերիկայի բարձրատիճան նախկին պաշտօնատարներուն վերաբերմունքը հայկական ցեղասպանութեան նկատմամբ անոնց «ցինիզմը» քննադատելով: Ուրեմն, Հայաստանի իշխանութեան գծով,

ամէն ինչ հանդարտ կ'ընթանայ, ժողովուրդը գոհ է, եւ ըստ թիւերու ներքը երկրին կը պարգեւեն նոր նախագահ, ըստ ծրագրի:

## ԼԵՒՈՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՊԱՐԱԳԱՆ

1998էն առիւն, երբ անկախ Հայաստանի առաջին նախագահ, Լեւոն Տէր Պետրոսեան իր հրաժարակներ պիտի տար, առաջին անգամ ըլլալով, քաղաքական ելոյթ կ'ունենար խիստ կերպով քննադատելով ներկայ իշխանութեանց ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը: Նոյնիսկ համաձայնուեցաւ ներկայ վարչակարգը կոչել «յանցագործ ռեժիմ» եւ յայտնեց որ յառաջիկայ նախագահական ընտրութեան իր մասնակցութիւնը տակաւին յստակ չէ: Հայաստանեան թէ արտասահմանեան զանգուածները, նայած իրենց քաղաքական հակումներուն, թեր կամ դէմ ընդունեցին իր կարծիքները, որոնք պէտք է խոստովանիլ, բաւականին ծանրակշիռ էին: «Կլիովին մաքիտը» նկարագրուած ռեժիմը, ի հարկէ հաճելի չէր կրնար թուիլ երկրի իշխանութեանը, որոնք, հակաճառելու իրենց տրամադրութիւնը քողարկուած կերպով յայտնեցին: Վազգէն Մանուկեան նոյնիսկ «հիպոթիզուած» կը թուի երկրի առաջին նախագահին ելոյթէն: Ամէն պարագայի, տակաւին յստակ չի թուի Լ. Տէր Պետրոսեանի քաղաքական հրապարակ իջնելու տրամադրութիւնը: Թերեւս աւելի լաւ կ'ընէր իր ընդհանուր քաղաքական «փլաթֆորմը» պատրաստած իջնէր հրապարակ, եւ համարձակօրէն ձեռնարկէր ընտրարշաւի:

Լեւոն Տէր Պետրոսեանի հրապարակ իջնելուն ամենէն ցայտուն երեւոյթը կը հանդիսանար իր հանդիպումը Դաշնակցութեան ղեկավարութեան հետ, եւ այս մէկը, ըստ երեւոյթի իր իսկ ինդրանքով: Տակաւին, մեր յիշողութեան մէջ թարմ է 14 տարիներ առաջ, Լ. Տէր Պետրոսեանի ելոյթը Դաշնակցութեան դէմ եւ իր իշխանութեան առած քայլերը այս կուսակցութեան գործունէութեան կաշկանդումի գծով:

14 տարուայ այս ժամանակաշրջանին, իր սփինքսեան լու-

թենէ ետք, «բաւական ջուրեր անցած են կամուրջին տակէն»: Դաշնակցութիւնը յաջողած է տեղ մը գտնել այսօրուայ իշխանութեան հետ դաշինք կնքելով, եւ միւս երկու հոսանքներու հետ, մաս կը կազմէ իշխանութեան: Կայ աւելին: Դաշնակցութիւնը երկու թեկնածուներով կ'իջնէ ընտրութեան, հակառակ անոր որ լաւ գիտէ գալիք ընտրութեանց հաւանական արդիւնքները: Ինչո՞ւ էր Լ. Տէր Պետրոսեանի հանդիպումը Դաշնակցութեան ղեկավարութեան հետ: Իրենց հաղորդագրութեան մէջ ըսուած է թէ կողմերը, այսինքն Լ. Տէր Պետրոսեան եւ Դաշնակցութիւն «պայմանաւորուել են քաղաքակիրթ պայքար մղել, զերծ մնալ ցեխարձակումներից, պայքարի դաշտում պահպանել խաղի որոշ կանոններ, երկու քաղաքական մշակոյթի հաստատելու նպատակով»: «Նաեւ պայմանաւորուեցիք մնալ քաղաքական-գաղափարական պայքարի մակարդակի վրայ եւ չիջնել այդ մակարդակից»:

Անշուշտ գովելի են այս տրամադրութիւնները, որոնք, դժբախտաբար կը հաստատեն քաղաքական մշակոյթի պակասը, ինչպէս նաեւ մակարդակի փնտրուածը Հայաստանի քաղաքական կեանքէն ներս: Այս հարցերու համար էր որ կողմերը հանդիպեցան: Եթէ միայն ասոնք էին իրենց համաձայնութիւնները դարձեալ գովելի կը մնան: Առածը կ'ըսէ թէ քաղաքականութեան մէջ «անկողնային տարօրինակ գործընկերներ կրնան պատահիլ»: Լ. Տէր Պետրոսեան-Դաշնակցութիւն հանդիպումը նման «տարօրինակ հանդիպում» մըն էր:

## ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆ

Արդեօք կ'արժէ խօսիլ «ընդդիմադրութիւն» ճանչցուած ողբալի խմբաւորումի մասին, որ ուղեկորոյց նաւի կը նմանի եւ անկարող է իր ընթացքն ու դիրքորոշումը ճշդելու: Միասնական թեկնածուի մը նոյնիսկ փնտրուածը խօսքը չկայ, որ իր շուրջը կարենալ համախմբել բոլոր ոչ թերը, որուն նաեւ կը խոստանար մասնակցիլ ինքը, նախկին նախագահը: Ինչպէս Պարոնեան պիտի ըսէր. «Ամէն ինչ մթնութեան մէջ է»:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
Email: massis2@earthlink.net

**ATLANTIS**  
RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS  
**ARABIAN NIGHTS**

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS HELINA AND THE SAHALAH DANCERS

authentic cuisine  
full hookah bar  
VIP membership  
full cocktail bar  
live belly dancing  
live music and DJ

**ATLANTIS**  
RESTAURANT AND NIGHT CLUB  
626.449.4599  
162 N. SIERRA MADRE BLVD.  
PASADENA, CA 91107

*North America Welcomes*

# KOHAR

Symphony Orchestra and Choir

*Los Angeles*  
18 October  
GIBSON THEATRE

*Chicago*  
1 November  
HARRIS THEATER

*San Francisco*  
26 October  
NOB HILL MASONIC CENTER

*Detroit*  
30 October  
MAX M. FISHER MUSIC CENTER

*Boston*  
10 November  
COLONIAL THEATRE

*Montreal*  
18 November  
PLACE DES ARTS

*Toronto*  
16 November  
CENTRE FOR THE ARTS

*New York*  
20 November  
CARNEGIE HALL

TicketFusion ticketmaster

www.koharconcert.com



*Los Angeles welcomes*

# KOHAR

Symphony Orchestra and Choir

18 October  
GIBSON THEATRE

ticketmaster

www.koharconcert.com

ՇՈՒՆԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.Ի ԱՐԵՎԵԼԵԱՆ ԹԵՄ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Իր շքախումբով Նիւ Եորքի Առաջնորդարանը ժամանեց Հինգշաբթի Հոկտեմբեր 4, չետ միջօրէի ժամը 12:15-ին՝ Առաջնորդարանի, Հայ Օգնութեան Ֆոնտի եւ Հայ Եկեղեցւոյ Հիմնադրամի անձնակազմին հետ կէսօրուան ճաշին նախագահելու համար:

սիսեան, Թեմական Պատուիրակ եւ Միջ-Եկեղեցական Յարաբերութեան վարիչ Տնօրէն Գերշ. Տ. Վիգէն Արք. Այգազեան, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բագրատ Եպս. Գալստանեան, Մայր Աթոռի դիւանապետ Գերշ. Տ. Արշակ Եպս. Խաչատրեան, գաւազանակիր Հոգշ. Տ. Յովնան Աբղ. Յակոբեան, Մայր Աթոռի լրատուութեան պատասխանատու Արժշ.

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Իր շքախումբով մեկնեցաւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան կեդրոնը՝ ուր ուսական «Իթար-Թաս» լրատուական կեդրոնի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ ցուցահանդէս «Ռուս Ուղղափառ Եկեղեցի եւ Միջ-Կրօնական Երկխօսութիւն եւ Ռուսիոյ Հոգեւոր Վերագարթօնքը» նիւթին շուրջ:

եան շքեղ հանդիսասարահին մէջ: Այս առիթով ներկաները պատեհութիւնը ունեցան մօտէն հանդիպելու Ամենայն Հայոց Հայրապետին, խօսելու Անոր հետ եւ լուսանկարուելու:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՊՈՍԹՈՆ  
Հոկտեմբեր 5, 2007ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Իր շքախումբով Լոնկ Այլլընտի օդանաւակայանէն ճամբայ ելաւ դէպի Պոսթոն, ուր Զինք դիմաւորելու եկած էին շրջանի հոգեւորականները, եկեղեցապատկան կազմակերպութեան ներկայացուցիչներ եւ դպրոցական աշակերտներ: Աւանդական »աղ ու հաց«ի օրհնութենէն ետք, շքախումբը ճամբայ ելաւ դէպի պանդոկ: Երեկոյեան ժամը 8:00-ին՝ One Exchange Place-ի մէջ տեղի ունեցաւ երիտասարդ արհեստավարներու ձեռնարկը՝ յատկապէս պատրաստուած ճոխ յայտագիրով: Ներկայ էին մօտ 300 երիտասարդներ:



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս իր շքախումբով Ս. Վարդան Մայր Տաճարի մուտքին

սրահի մուտքին ներկաները խմբական լուսանկար առին Նորին Սրբութեան հետ, ապա սրահին մէջ իրենց տեղերը գրաւեցին:

Վեհափառ Հայրապետի սեղանի օրհնութենէն ետք՝ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան բաժակ բարձրացուց Ամենայն Հայոց Հայրապետի քաջառողջութեան եւ կենացը եւ իր բացման խօսքին մէջ ըսաւ. »Ուրախ ենք որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ամերիկայի Արեւելեան Թեմին տուած իր հովապետական այցելութեան առաջին օրերուն իսկ կը մասնակցի Առաջնորդարանի ընտանիքի անդամներուն կէսօրուան ճաշին: Երջանիկ ենք որ մեր ընտանիքին հայրը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեզի հետ է այսօր:

Իր խօսքէն ետք՝ Սրբազան Հայրը ներկայացուց Նորին Սրբութեան շքախումբը, որոն մաս կը կազմեն Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Նոր Նախիջեւանի եւ Ռուսիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Եգրաս Եպս. Ներ-

Տ. Կորիճ Քհնյ. Տէվէճեան: Առաջնորդարանի մայրախնամ հոգատար Տիկին Ճազլին Տշխունեան Վեհափառ Հայրապետի ձեղամբ ստացաւ շքանշան: Սրբատառ Կոնդակը կարդաց Գերշ. Տ. Արշակ Եպս. Խաչատրեան:

Վեհափառ Հայրապետի թելադրութեամբ՝ Մայր Աթոռի դիւանապետ Գերշ. Տ. Արշակ Եպս. Խաչատրեան բացատրութիւններ տուաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բաժանմունքներուն, կազմակերպչական, եկեղեցաշինական եւ ճարտարապետական աշխատանքներուն, Հոգեւոր ձեռնարաններուն, Մայր Աթոռի եւ այլ թեմերու յարաբերութեանց, Հայորդեաց Տուններուն եւ «Շողակաթ» հեռուստատեսութեան կայանին մասին:

Ամենայն Հայոց Սրբազանգոյն Կաթողիկոսի փակման աղօթքով վերջ գտաւ Առաջնորդարանի պաշտօնէութեան հետ հանդիպումը:

Յուցահանդէս Միացեալ Ազգերու կազմակերպութեան կեդրոնի սրահին մէջ  
Յետ միջօրէի ժամը 4:30-ին՝

Վեհափառ Հայրապետը ունեցաւ ընթրիք Միջ-Եկեղեցական կազմակերպութիւններու դեկավարներուն հետ:

Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանի բարեգալստեան խօսքէն ետք Վեհափառը իր գոհունասկութիւնը յայտնեց որ այսքան հոծ թիւով Հայ եւ քոյր եկեղեցիներու հոգեւորականներ եւ հաւատացեալներ ներկայ են բարի գալուստ մաղթելու Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ս. Էջմիածնի եւ ազատ ու վերածնած Մայր հայրենիքի ող-



Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.

ջոյնները փոխանցեց բոլորին:

Նիւ Եորքի, Նիւ Ճըրզիի եւ Թրամպլի (Գընէթիքէթ) դպրաց դասերու անդամներով կազմուած երգչախումբը ներդաշնակօրէն երգեց «Ուրախ Լեր»ը, «Հայր Մեր»ը, «Էջմիածին ի Հօրէ»ն եւ «Հայրապետական Օրհներգը»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի զլխաւորած հոգեւորականներու թափօրը Մայր Տաճարէն դուրս ելլելէ ետք՝ բոլորը մասնակցեցան ճոխ հիւրասիրութեան, որ տեղի ունեցաւ Հայկ եւ Ալիս Գալուքճ-

Հոկտեմբեր 6-ին Ուոթըրթաունի Ս. Յակոբ Եկեղեցւոյ մէջ Ամենայն Հայոց Հայրապետը ողջունեց հոծ թիւով մասնակներու ներկայութիւնը:

Մասնակներու հետ հանդիպումէն ետք՝ Նորին Սրբութիւնը իր շքախումբին հետ նախաճաշի սեղան նստաւ Երիտասարդաց Կազմակերպութեան անդամ պատանիներու հետ՝ Եկեղեցւոյ Քէլճիք Սրահին մէջ:

Մար.ը Էջ9

1975-2008  
**33<sup>th</sup>**  
ANNIVERSARY  
Life, Health, Group Health  
Disability, Long Term Care  
**NEW YORK LIFE**

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌԱԺԵՇՏ Է

ԵՐԻԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՍԱՆԹՈ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205  
E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"





ՎՈԿՈՒՊԵՏԱԿԱՆ ԱՅՑ

ՍՓԻՒՔԱՎԱՅ ԼՈՒՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵՂԻՆ Բ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՍ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Շարունակում է 8-էն

Յետ միջօրէի ժամը 2:30-ին՝ Ամենայն Հայոց Հայրապետը իր շքախումբով մեկնեցաւ դէպի Հայ Տարեցներու Տունը, ուր կատարեց սնորհանքի արարողութիւն, հանդիպում ունեցաւ Տան բնակիչներուն հետ, աղօթեց անոնց համար եւ օրհնեց զանոնք:

Կիրակի Հոկտեմբեր 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս պատարագեց Գէյմպրիճի (Մասսաչուսէց) Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Նիւ Ինկլընտի շրջանի եկեղեցիներու միացեալ դպրաց դասը՝ խմբավարութեան խորհրդի Մէլիսանէճեանի:

Ս. Պատարագի աւարտին Նորին Սրբութիւնը Ս. Խորան հրաւիրեց Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժշ. Տ. Վազգէն Քհնյ. Գուգուեանը՝ իր գնահատանքը յայտնեց անոր կատարած հովուական օգտակար աշխատանքին համար եւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ նուիրեց սրբանկար մը:

Յետ միջօրէի ժամը 5:00-ին՝ Ամենայն Հայոց Հայրապետը իր շքախումբով հիւրը եղաւ Ամերի-

«Մասսաչուսէցի եկեղեցիներու խորհուրդը հաստատապէս կը ճանչնայ 1915 Ապրիլ 24-էն մինչեւ 1923 թուականներուն տեղի ունեցած Հայոց ցեղասպանութիւնը, որ պատճառ դարձաւ Օսմանեան Կայսրութեան մէջ մէկ ու կէս միլիոն հայերու բնաջնջումին եւ գրեթէ ամբողջ հայութեան տեղահանման Փոքր Ասիոյ իրենց պապենական երկրէն: Հայոց ցեղասպանութիւնը ժամանակակից առաջին ցեղասպանութիւնն է՝ որ պետութեան քաղաքականութիւնն էր . . .

Հիւրընկալ Գարտինալ ՕՄալլի բարի գալուստ մաղթեց Ամենայն Հայոց Հայրապետին եւ անդրադարձաւ Հռոմի Կաթողիկոսի եւ Հայ Առաքելական Եկեղեցիներու եղբայրական յարաբերութեան մասին, եւ խօսքը ուղղելով Նորին Սրբութեան եւ Թեմակալ Առաջնորդին ըսաւ. »Ես կը փափաքեմ անգամ եւս հաստատել որ կը ճանչնամ Հայոց ցեղասպանութիւնը եւ կ'ըմբռնեմ այն տառապանքը՝ որ այդ ցեղասպանութիւնը պատճառած է Հայ ժողովուրդին, կը փափաքեմ յայտնել նաեւ որ ես կը քաջալերեմ Պոսթոնի Հայոց Ցեղասպանութեան Յուշարձանը կա-

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՒՇՐՈՒ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՅՈՒՄ ՈՒԷԼԶԻ ՄԷՋ

Յառաջիկայ Նոյեմբերի 3ին 2007, Մեծն Բրիտանիոյ Ուէլզ քաղաքին իրադրութեան Տաճարի բակին մէջ, բացումը պիտի կատարուի Մեծ Եղեռնի զոհերու յիշատակի յուշարձանին:

Յուշարձանի օժման արարողութիւնը պիտի գլխաւորէ Մեծն Բրիտանիոյ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Նաթան Եպս. Յովհաննիսեան: Բացման արարողութեան աւարտին պիտի յաջորդէ հիւրասիրութիւն իրադրութեան տաճարի սրահին մէջ, որուն ներկայ պիտի գտնուին հայ եւ օտար հրաւիրեալներ:

Նշենք նաեւ որ այս յուշարձանի կառուցումն իրականացած է շնորհիւ Ուէլզ քաղաքի հայ համայնքի ճիգերուն եւ Պրն. Ճոն Թորոսեանի գլխաւորած յանձնախումբի հետեւողական աշխատանքներուն:

ՖՐԱՆՍԱՎԱՅԵՐՈՒ ՆՈՒԷՐ ՓԱՐԱՔԱՐ ԳԻՐԻ ԴՊՐՈՑԻՆ

Հայաստան Համահայկական Հիմնադրամի տեղական մարմնի միջոցով վերակառուցած է Փարաքար գիւղի Յովիկ էտկարեանի անուան արուեստի դպրոց: 140 ամերիկեան տոլար արժողութեամբ ծրագիրն իրագործուած է ի յիշատակ Ստեփան եւ Գայանէ Դիրիաքեաններու:

Սոյն միայրկանի շէնքը մեծապէս տուժած էր 1988ի երկրաշարժէն: Արդարեւ այդ ծրագրի ծիրին մէջ վերակառուցուած է ուսումնարանի տանիքը, յատակը, փոխուած են դռներն ու պատուհանները, կատարուած են նաեւ ներքին յարդարման աշխատանքներ: Սոյն արուեստի դպրոցն սկսան յաճախել Փարաքարէն եւ մօտակայ գիւղերէն մօտ 200 աշակերտներ:

35000 ՏՈՒՄ ՆՈՒԻՐԵՑ ՎԱԼԵՊԻ ԿԻԼԻԿԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԻՆ

Լոս Անճելոսի եւ շրջակայքի մէջ գործող Կիլիկեան Բարեգործական Միութիւնը այս տարի (2006-2007 տարեշրջան) 35,000 տոլարի գումար մը առաքած է Հայկալի Կիլիկեան վարժարանին:

Կիլիկեանի նախկին սաներն իր մէջ պարփակող Կիլիկեան Բարեգործական Միութեան Վարչութեան ատենապետ՝ Տիգրան Սարգիսեան յայտնեց թէ նախորդ տարիներուն եւս գումարներ յատկացուցած է սիրեցեալ հաստատութեան կարօտեալներուն ֆոնտին:



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Պաթոնի Ողջակիզման Յուշարձանի առջեւ

կալի Հայկական Գրադարանի եւ Թանգարանի վարչութեան: Այցելելէ ետք գրադարանն ու Թանգարանը՝ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Իսկ երեկոյեան ժամը 8:00-ին, դարձեալ վարչութեան հրաւերով, ընդունելութիւն մը սարքուեցաւ Հովուապետական Այցելութեան նուիրատուներուն եւ Ս. էջմիածնի բարեկամներուն մասնակցութեամբ:

ուուցելու ձեր ջանքերը: (Այստեղ կ'արժէ յիշել որ Մասսաչուսէցի իշխանութիւնները արտօնած էին Պոսթոնի մէջ կառուցել Ցեղասպանութեան Յուշարձանը, սակայն վերջին պահուն որոշուեցաւ մերժել այդ առաջարկը:)

Հաւաքոյթի աւարտին՝ Ամենայն Հայոց Հայրապետը Կարտինալ ՕՄալլիին նուիրեց ոսկեգօծ լանջախաչ մը:

Հոռնական Կաթողիկ Եկեղեցւոյ Արքեպիսկոպոսարանին մէջ Երկուշաբթի Հոկտեմբեր 8, առաւօտեան ժամը 9:30-ին՝ Ամենայն Հայոց Հայրապետը, ընկերակցութեամբ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանի եւ շրջանի հայ հոգեւորականներուն, նախաճաշի հիւրը եղաւ Հռոմէական Կաթողիկ Արքեպիսկոպոս Կարտինալ Շան ՕՄալլիի: Աղօթքի արարողութենէն ետք՝ Մասսաչուսէցի եկեղեցիներու Ազգային խորհուրդի Գործադիր Մասնակցի շրջ ձեռնարկ կարդաց Մասսաչուսէցի եկեղեցիներու խորհուրդի հետեւեալ որոշումը եւ սպա յանձնեց Ամենայն Հայոց Հայրապետին.

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ՊՈՍԹՈՆԻ ՈՂՋԱԿԻԶՄԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ Հռոմէական Կաթողիկ Եկեղեցւոյ Արքեպիսկոպոսարանին մէջ տրուած նախաճաշէն ետք, առաւօտեան ժամը 11:00-ին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. այցելեց Պոսթոնի Ողջակիզման Յուշարձանը: Նորին Սրբութեան կ'ընկերակցէին Պրուքլանցի (Մասսաչուսէց) Պէթ Չիոն Սինակոկի հոգեւոր առաջնորդ Բաբբի Մօշէ Ուոլտոք, Anti-Defamation League-ի ղեկավար Էնտրու Թէրսէյ եւ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան: Ամենայն Հայոց Հայրապետը

ծաղկեպսակ գետեղեց Ողջակիզման Յուշարձանի առջեւ եւ Բաբբի Մօշէ Ուոլտոքի հետ աղօթք մատուցաւ Աստուած՝ որպէս զի որեւէ ազգի կեանքին մէջ այլեւս նման ոճրագործութիւններ չպատահին, եւ մտահոգութիւն չյայտահանին, որ այսպիսի դժբախտութիւններու ճանաչումը, դատապարտումն ու կանխումը դրուին հաստատ հիմքերու վրայ, յատկապէս Տարֆֆուրի ժողովուրդին համար, որ զոհ կը դառնայ ցեղասպանութեան: Այս առիթով Ամենայն Հայոց Հայրապետը իր շնորհակալութիւնը յայտնեց Anti-Defamation League-ի ղեկավար Էնտրու Թէրսէյի՝ որ իր կազմակերպութիւնը բարոյապէս աններելի կը գտնէ եւ կը դատապարտէ բոլոր անոնք՝ որոնք չեն ընդունիր Հայոց Ցեղասպանութիւնը: Նոյն ատեն Նորին Սրբութիւնը իր շնորհակալութիւնը յայտնեց Ամերիկայի Հրէական Համայնքի նախկին նախագահ ձեռնարկի հետ:

մէնի՝ մարդկութեան բարօրութեան ի նպաստ անոր կատարած գնահատելի աշխատանքին համար: ձեռնարկի հետ խօսքին մէջ ըսաւ. » Մենք մեծապէս պատուուած ենք որ Պոսթոնի մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. իր յարգանքը մատուց Ողջակիզման զոհերու յիշատակին: Ընթրիք՝ Նիւ Ինկլընտի Հայ Եկեղեցիներու ղեկավարներուն հետ Երեկոյեան ժամը 7:30-ին, Գէյմպրիճի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ Ամենայն Հայոց Հայրապետի նախագահութեամբ ընթրիքի հրաւիրուած էին Նիւ Ինկլընտի շրջանի եկեղեցիներու հոգեւոր հովիւները, Ծիսական խորհուրդներու անդամներն ու թեմական պատգամաւորները: Ընթրիքի ընթացքին ներկայները սրտբաց գրոց ունեցան Հայաստանեայց Եկեղեցւոյ Հովուապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի հետ:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year) \* \$50,00 for USA  
\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:----- Country:-----  
Tel:----- Fax:-----

# ՓԱՂՈՒԹԱՅԻՆ

## ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՒ ՊԱՏԻՈՅ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԵՆՈՎՔ ՊԱԼԻԿԵԱՆԻ

ՍԱՄՈՒՔԼ ԻԼԱՆՃՆԱՆ

Շաբաթ, 13 Հոկտեմբեր 2007ին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանային Յանձնաժողովը, Փաստինայի «Huntington Ritz Carlton» պանդոկի շքեղ սրահներուն մէջ պիտի մեծարէ եւ պատուէ Միութեանս հաւատաւոր անդամներէն՝ Պրն. Ենովք Պալիկեանի ազգասիրական, հասարակական, մշակութային, մարզական եւ ընկերային վաթսուամեայ ծառայութիւնը՝ ի մասնաւորի Հ.Բ.Ը. Միութեան:



Ենովք Պալիկեան միջնակցական է Զօրավար Անդրանիկի կամաւորներէն՝ Փիլիպոս եւ Ազգանուշ Փալիկեաններուն:

Հասարակ պաշտօն մը չէ հոգեւորականին ընտրած ասպարէզը, որ անկէ ներս դիւրասահ մեղքերով բրգացած տիրահոգակ բախտախնդիրներէ:

Ասոնք միայն վեղարով ու փակեղով եկեղեցականներ են, եւ ժամանակի թոյլատու պայմաններն ալ՝ ազատութիւն կուտան, որ մեղքին հետ համընթաց քալեն մինչեւ իրենց մեղապարտ կեանքին

վախճանը: Ներկայիս, մարդկային հասարակութեան հոգեկան կլիման այն աստիճան նեխած է, որ մարդիկ, կարծես հաճոյք կը զգան ուրիշները անիրաւել, զրպարտել ու մինչեւ անգամ անաբեկել ու սպաննել:

Օրէնքին ղեկավարները կամաւոր կոչուեցին դարձած են: Ոճիրը կամ ոճրագործը կը տեսնեն ու չեն տեսներ: Բոլոր մեղքերը եւ սխալները կը գործուին սանձարձակ ազատութեան մէջ: Ամէն բան, որ ներութիւն է կը յարգուի, ամէն ինչ որ կեղծ է կը գնահատուի եւ հասարակութեան բարոյականը, այնքան խաթարուած է, որ՝ ոչ ոք կ'ամչնայ մերկութիւնը եւ ամօթը անպատկառօրէն ծափահարելու:

\* \* \*

Ինչպէս ամէն մարդու, նոյնպէս եկեղեցականին կեանքէն անխուսափելի է սուտը: Մեղքը՝ բոլոր մարդոց համար՝ համեղաճաշակ խայծ դարձած է: Վստահութիւնը դադրած է, հին օրերու անկեղծութեամբ ճառագայթներ արձակելէ:

Այս անմարդկային մեղանշումները, կրօնականը կը հեռացնեն Աստուծոյ լոյսէն եւ կը դառնացնեն անոր կեանքը ժողովրդային մտրակումներով:

Եթէ հոգեւորականը հասկնար, թէ հանրութեան մէջ ամենաբարձր հեղինակութիւնն է եւ ամենանսեմ անձնաւորութիւնը աստուածային կոչումով, ակնածանքը? Հանդէպ իր անձին ու պաշտօնին երկնային ճառագայթում կը ստանար:

Այսօր, եթէ իր սեւաթոյր տարակրի վսեմութիւնն չի տրուիր, պատճառը՝ իր բարոյական փլուզումն է, իր կամայ ակամայ սայթաքումները:

Աշխարհական մը՝ չի կրնար ամենապատիւ համարուիլ հոգեւորականէն, որքան ալ իր կուրծքը պճնուած ըլլայ պատուանշաններով: Որովհետեւ, բարոյական ամէն արժէք ու արժանիք, որ կը բարացուցէ կրօնականը, ներքուստ եւ արտաքուստ երկնային է, երկրի անցողական փառքերէն գերիվեր:

Պատարագիչ քահանան, երբ յաճախ ժողովուրդին կը դառնայ եւ ձեռքովը խաղաղութիւն կը բաշխէ, պէտք է բոլորովին անգիտանայ իր ինքնութիւնը եւ աչքերը դէպի երկիր խոնարհած, անտես հաւատացեալներու ներկայութիւնը:

Յաւալի է, որ այս կենսական կարգապահութիւնը հազուադիւս քիչներն են, որ կը յարգեն եւ ոմանք սեւեռաբիբ կը պտըտցնեն իրենց ակնարկը մարդ է մարդ, մէկը նկատելու խուզարկումով:

Անցեալի մէջ, եղբր են եւ այսօր ալ կան՝ համբուրելի բարոյականով հոգեւորականներ, որոնք Սիրոյ խորանին վրայ հոգեկան եւ ֆիզիքական արտայայտութիւններով, առաքիւնութիւն կը բուրեն:

Շատերուն մօտ աղօթքը եւ երգեցողութիւնը կը դրսեւորուի ձեւապաշտութեամբ կլայկուած, որ բառին ճշգրիտ առումով սնապարծութիւն է:

Ափսոսալի է, որ բնականը կը ժխտուի եւ արուեստականը կը մեծարուի, հաւատքը կը խեղաթիւրուի եւ փարիսեցիութիւնը կը պատուուի, բարեպաշտութիւնը կը սքողուի եւ փառասիրութիւնը կը փարաքշուի:

Այս անբաւելի գայթակղու-

թիւնները կը գործուին խղճին ազդարարութիւնները արհամարհելով եւ անուշ յորդորները լուսթեան դատապարտելով:

Առաջին ընտանիքին աշխարհ գալէն ասդին, աշխարհ չճանչցաւ արդարամիտ մարդ մը, որ իր գործած մեղքը ընդունէր:

Եսամոլութեան ճիւղը մարդուն բնութեան մէջ որջացած՝ միակ նպատակ կը հետապնդէ կործանել ինքզինքը եւ բովանդակ աշխարհը:

Հայը՝ հայրենիքին ու հայութեան սիրոյն կը գոհէ ինչքը եւ կեանքը, բայց՝ Ոչ ԻՐ ՄՈՒԼԵՌՆԵՐԵՍԸ:

Աշխարհը, ճգնաժամային ցնցումներէ, այնքան չէր տառապեր ու տուժեր, եթէ գլուխը նուազ բրգացած ըլլար գիտելիքներով:

\* \* \*

Շատ է թիւը անկենցաղագէտ մարդոց, որոնք եկեղեցի կը մտնեն, կարծես թէ սրբութենէ պարպուած հասարակ սրահ մը ըլլար:

Ճշմարիտ հաւատացեալը, որ Աստուծոյ Տունը կը մտնէ ու իր տեղը կը գրաւէ, պէտք է անտեսէ, ոչ միայն իր յարակից անձը, այլ ներկայութիւնը աղօթողներու բազմութեան:

Յաճախ նկատուի եմ՝ խուզարկու աչքերով եկեղեցի յաճախողներ, որոնք՝ այն սպաւորութիւնը թողեր են վրաս թէ եկեր են մարդ փնտռելու եւ ոչ թէ Աստուած տեսնելու:

Կը յիշեմ հին օրերուն, կանուխ եկեղեցի ժամանող այլևոր կին մը, որ նկատելով սակաւաթիւ ներկաները, անուղակի խօսքը ին-

ծի ուղղելով՝ ըսաւ, -Մեղայ, մարդ չկայ... -Տիկին, ըսի, գինք կշտամբելով, դուք եկեղեցի կուգաք մա՞րդ տեսնելու, թէ՛ աղօթելու:

Աւելի քան կէս դար առաջ, տակաւին աշխարհական, Աղեքսանդրիոյ հայ կաթողիկէ եկեղեցին դպրապետութեան պաշտօն վարեցի հինգ տարի:

Ոչ մէկ ժամանակ չնկատեցի, որ յապաղած հաւատացեալ մը եկեղեցի ժամանէ եւ ներկաներէն սեւեռաբիբ դիտուի իր մուտքը:

Դժբախտաբար, առաքելական եկեղեցիներու մէջ այս գովելի կարգապահութիւնը չես տեսներ: Արմատական սովորութիւն դարձած է այս անգտանելի հետաքրքրութիւնը, այն օրէն ասդին, ուր բամբասանքը ժողովրդային աճուած արձանագրեց:

Պատահեցաւ, որ օր մը, քարոզելու ժամանակ՝ տիկին մը դանդաղ քայլերով դէպի դաս յառաջացաւ եւ առաջին նստարանին վրայ իր տեղը գրաւէ սգաւորներուն քով:

Բոլորին ուշադրութիւնը իր վրայ հրաւիրող այս տիկինը, պատճառ դարձաւ, որ քարոզս ընդհատեմ եւ գլուխները ինծի դառնալէ ետք, քարոզը շարունակեմ:

Դժբախտաբար, Ամերիկա կոչուած այս հարուստ երկրին մէջ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ մը չկայ, ուր մարդիկ սորվէին, թէ եկեղեցին երկնային հաստատութիւն մըն է, ուր կ'իշխէ միայն ՏԻԵՉԵՐԱԿԱԼԻՆ ՓԱՌՔԸ եւ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ, ոչ թէ արտասալի շահագրգռութիւնը ձեւապաշտ հաւատացեալներուն:

## ՄԵԾԱՐԱՆՔ ԵՆՈՎԵ ՊԱԼԻԿԵԱՆԻ

Շարունակուած էջ 10-էն

եան Կեղրոնին մէջ երկրորդական վարժարանի Յանձնախումբը որ 2006ի Սեպտեմբերին, մեծ խանդավառութեամբ բացաւ իր դռները հայ ուսանողներուն առջեւ:

Այժմ ատենապետն է Ալեք Մանուկեան Կեղրոնի վարչական Տնօրէն Մարմնի:

Հեղինակած է Սիրոյ եւ Կարօտի Մեղեդիներ՝ երգերու երաժշտական հատոր մը նուիրուած ի յիշատակ վաղամեռիկ իր կնոջ՝ Տօքթ. Ասողիկ Նասիպեանին:

Ունի անտիպ թատրերգութիւն մը՝ Կիներ Աշխարհի Միացէք

խորագրով:

Հ.Բ.Ը. Միութեան հարիւրամեակի առիթով ունի յօդուածաշար մը վեր առնելով Բարեգործականի անասման գործունէութիւնը հայրենիքի մէջ եւ մանաւանդ ի սփիւռս աշխարհի, ինչպէս նաեւ Հայ Աւետարանական եւ Հայ կաթողիկէ համայնքներու ունեցած օտգաշատ դերը ՀԲԸ Միութեան:

Անհուն ուրախութեամբ եւ հպարտութեամբ կ'ողջունենք մեր սիրելի մեծարեալ՝ Ենովք Պալիկեանը:

Հազար ու հազար փառք ու պատիւ հայրենասէր գործիչին ու անխոնջ միութենականին:

**Հայ Թելեժամը Կը Վերադառնայ 18ը Ալիք Վրայ Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 Ժամ այլ Օրուան 24 Ժամերը**

**Շարաքը 7 օր անվճար**  
Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ

**Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Հայկական Թելեժամ (818) 982-2400**

\*\*\*\*\*

**The Armenian Teletime Is Back On Channel 18**  
Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day  
**7 Days Per Week, Free**  
No Subscription Fee - Plus 40 Additional Channels  
For info call The Armenian Channel (818) 982-2400



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԳՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ  
Proud Past



Լուսաշող Ապագայ  
Exciting Future

**SOLD OUT**

AGBU SOCIETY OF CALIFORNIA DISTRICT COMMITTEE  
Proudly Presents the 4th Annual

# AGBU SOCIETY DINNER



Honoring  
**YENOVK  
BALIKIAN**  
AGBU Honor Member,  
for his outstanding services and  
total dedication to the AGBU.

Keynote Speaker  
State Senator  
**JOE  
SIMITIAN**  
California State Senate



Master of Ceremonies  
**TOROS YETENEKIAN**

Cocktail Reception / Silent Auction – 7:00 PM  
Terrace Entertainment  
**GOR MKHITARIAN & SONYA VAROUJIAN**

Dinner / Program – 8:30 PM

Saturday, October 13, 2007

HUNTINGTON RITZ CARLTON HOTEL

DONATION \$1,000 (2 tickets)

For more information, call: 626.794.7942

# ՄՈՒԱՅՈՒԱԾ ՊԱՐՏԵՐ

**Ռ. ԿՈՐԻԻՆ**  
(Շարունակում Երեսուցի Թիլեմ)

Հայկեր նախքան Հայաստան մեկնելը աշխատում էր որպես գատովչիկ (կոշիկի երես կարող), նա ունէր իր վարձակալած փոքրիկ գոծատեղին, ուր կաշուց կոշիկ երեսներ էր ձեռնում, կտրտում, կարում եւ վաճառում: Նա իր ցանկացած ընտիր կաշին գնում էր չարմէ աղայէ Խոսրաւու հօջրէից (վաճառատնից):

Հայկի հայրենադարձութիւնը շատ արագ ու շտապ է տեղի ունենում, այնպէս որ հագիւ կարողանում է որոշ հաշիւներ փակել եւ գործերը վերջացնել, սակայն նա մի շատ կարեւոր պարտք մոռանում է վերադարձնել, երբ արդէն Հայաստանում էր իր հաշուի տեսրակները ստուգելիս է նկատում: Նա մոռանում է կաշի ծախողի 3000 թուան պարտքը մարել, անհանգիստ էր, որ ինչու է անփոյթ գտնուել: Նա այն մտքին էր, թէ վաճառականը բացասական վերադարձներ կանի մեր հայերիս հասցէին: Այն օրերի արժեւորումով գումարը շօշափելի դրամ էր: Հայկը խորհում է փողը վճարելու ձեւի մասին, նա այն եզրակացութեան է հասնում թեհրան գնալիս այդ դրամը վճարել, մինչ այդ լուի եւ ոչ ոքի հետ այդ մասին չկիսուի, որպէսզի տարբեր մեկնաբանութիւններ չկատարուի:

Դաւթենց բնակարանում սեղանի շուրջը բոլորած Հայկի ընկերներն էին՝ աջին Տիգրանը, իսկ ձախին՝ Արշաւիրը ու ուրիշներ, Բոլորն էլ գուարթերն խինդ ու ծիծաղով ասում էին եւ քահքահ ծիծաղներով հրճում էին հին օրերի յուշերով:

Այդ բերկրալից մթնոլորտում Արշաւիրն իր բարձր ձայնով կոտրելով կողմնակի խօսակցութիւնների տալը հայեացքն ուղղելով դէպի Հայկը մտերմաբար գրոյցի է բռնում:

Արշաւիրը իր թիկնեղ ու բարձրահասակ կազմուածքով տղամարդու զեղեղիկ տեսիլով ուշադրութիւն էր գրաւում:

«Սիրելի՛ Հայկ նախ բարի ես եկել, մեր գլխի վրայ տեղ ունես, անսպասելի էր 25 երկար տարիներից յետոյ իրար հանդիպել, թէ՛ գնալը եւ թէ՛ գալը առեղծոածի տպաւորութիւն է թողել մեր ընկերներիս վրայ: Այ ընկեր-գործակից դու այստեղ լաւ գործ ունէիր եւ բարեկեցիկ վիճակ ու ընտանեկան ջերմ օջախ, ինչո՞ւ տունը մի անգամից քանդեցիր եւ հայրենադարձեցիր»:

«Ի սէր իմ երեխաներիս արեցի, որպէսզի հայրենիքում նրանք ուսում ստանան, հայկական ոգով մեծանան, հայրենիքում ապրեն եւ իրենց երկրին ծառայեն: Հայրենիքից դուրս տունը խախտւած է, աւագի վրայ է կառուցուած, հիմա իմ տունս կառուցել եմ ժայռի վրայ ապահով ու անվտանգ»:

Հայկի հակիրճ ու կտրուկ պատասխանը որեւէ պակաս տեղ չթողեց, որ Արշաւիրը շարունակի իր հարցադրումը, ուստի նա նախընտրեց միւս ընկերներին առիթ տալ խօսելու:

Այս անգամ Տիգրանը, մարգիկի կազմուածքով եւ համակրելի հայեացքով, օգտագործելով առիթը մտքում բանաձեւած հարցն արձարծեց.

«Սիրելի՛ Հայկ, արդարեւ սրտանց ուրախացել ենք մեր հայ-

րենասէր ընկերին հանդիպելով, մի բան ինձ հետաքրքրում է իմանալ քո զբաղմունքի մասին Հայաստանում»:

«Էն օրուանից որ Հայաստան գնացի, մի կարճ ժամանակից գործի անցայ կոշիկի ֆաբրիքայում: Նաչալնիկի (ղեկավար) ուշադրութիւնը գրաւեցի իմ աշխատասիրութեան շնորհիւ եւ նշանակուեցի բաժանմունքի վարիչ պաշտօնով: Անշուշտ կային դժուարութիւններ, որոնք կամաց-կամաց հարթուեցին, գոհ եմ կեանքից եւ աշխատանքից»:

Հարագատներ եւ ընկերներ կեր ու խումի սեղանը բոլորած երկար գրուցեցին տարբեր հարցերի շուրջ մինչեւ ուշ գիշեր:

Տնեցիները օրուայ ծանրաբեռնուածութիւնից յոգնած անցան ննջարանները:

Հայկը անմիջապէս չկարողացաւ քնել, երկու օրերի անցուդարձն էր անցկացնում իր մտապատկերից, հոգեպէս բաւարարուած էր զգում իրեն, որ եղբայրները եւ քոյրն ու նրանց ընտանիքները լաւ եւ ապահովուած են՝ առողջ ու գիտակից գաւակներով ու փեսաներով, նաեւ աշխատանքով, բայց ապագայից երկմիտ էր հաշտուում այն մտքի հետ որ ապահովութիւնը եւ հայապահպանումը երկարատեւ կը լինի, ուստի կուզէր նրանց խորհուրդ տալ հայրենիքի ճամբան: Հայկի ուղեղը նաեւ զբաղեցրեց դրամական պարտքը, իրեն մեղադրում էր կատարած յանցանքի համար, որ ժամանակին գայն չի փակել, այս մտքերով տարուած քուն է մտնում:

Հայկը թեհրան ժամանելու հենց առաջին րոպէներից մտադրել էր պատեհ առիթով գնալ եւ իր պարտքը վճարել: 25 տարիների հեռաւորութիւնը նրան մոռացնել էր տուել այդ պարտքը, որը յիշելիս իրեն յանդիմանում էր, նրա հոգեվիճակից այնպէս ենք կուահում, թէ իր անձի ինդիւրը չէ, այլ մտածում է հայի պատուին պիտակ չփակցուի:

Բարին բացուել էր, արդէն իսկ արեւն իր ոսկեթել թեւերը տարածել էր քաղաքի վրայ: Տնեցիները արթնացել եւ՝ բարի լոյս ասելով, ողջունել էին արեւաշող առաւօտը եւ պատրաստուում էին նախաճաշի: Երկու եղբայրներ իրենց կողակիցներով վայելում էին խնամքով պատրաստուած նախաճաշը: Հայկը շտապում էր, որ շուտ վերջացնի եւ ճամբայ ընկնի բազար գնալու համար: Դաւիթը նկատելով եղբոր այդ շտապ շարժումները հարց տուեց.

«Ինչ կայ աղբեր ջան, վաւորում ես, տե՞ղ ես գնալու»:

«Հա՛, աղբեր ջան, մի հոգու պիտի տեսնեմ, մինչեւ կէսօր կը գամ, յետոյ կը պատմեմ»:

Հայկի գնալուն ոչ ոք արգելք չեղաւ:

Փողոց դուրս գալուն պէս թաքսի նստելով մեքենավարին պարսկերէն լեզուով խնդրեց իրեն տանի Բազարէ Քաֆաշեան (կոշկակարների շուկան):

Հայկը լուռ նստած մեքենայի մէջ միայն պատուհաններից շուրջն էր դիտում, ջանում էր մեքենավարի ուշադրութիւնը չգրաւել, որպէսզի իր հետ խօսքի չբռնուի, նա մտքի մէջ բանաձեւում էր ասելիքը վաճառական Խոսրաւու հետ հանդիպելիս:

«Յարգելի՛ պարոն, հասանք, էն դիմացը Բազարէ Քաֆաշեանն է, մեքենավարը յարգալից լիչեցրեց Հայկին»:

Հայկը մտքերից սթափուած, դուռը շտապ բացեց, դրամը վճարե-

լով արագ քայլերով ճամբայ ընկաւ: Նա ճարպկօրէն ճեղքելով անցուորների խիտ շարքերը մտաւ մի երկար միջանցք վերեւը ծածակուած, աջ ու ահեակ լոյսերով ողողուած խանութներ՝ կողք-կողքի շարան: Նա լաւապէս էր յիշում խանութի վայրը, սրան եւ նրան հարցնելով վերջապէս գտաւ: Նա գոյջ եւ լուրջ քայլուածքով ներս մտաւ, նախ բարեկեց եւ հարց տուեց.

«Բարի օր պարոններ, կը ներէք ինձ, ես հաջ Խոսրաւուն կը խնդրեմ. Խանութի անկիւնում յաճախորդների միջից մէկը ձայն տուեց. «Ես եմ, խնդրեմ, սպասէք, մինչեւ գործս այս պարոնների հետ վերջանայ»:

Հայկը մի ակնարկով չճանաչեց, լաւ խորացաւ նրա դէմքին, տեսաւ մի բոլոր է պահել, ինչ որ յեղափոխութիւնից յետոյ քաջալերուում էր, էջը կասկածում, որ ինքն է, բայց դէմքով ծերացել եւ մէջքով կորացել էր, գլխին էլ սրճագոյն թելից գործուած թասակ էր դրել: Հայկը մի անկիւն քաշուելով սպասեց, բայց ոչ պայծառ եւ ուրախ դէմքով, այլ խորասուզուած մտքերի մէջ, ինքն իրեն մտմում էր, չլինի պարտքի համար իրեն յանդիմանի, որ ինչո՞ւ ժամանակին չի վճարել:

Վաճառականը բարի եւ ազնիւ մարդու համբաւ ունէր եւ յարգանքի արժանի իր գոծակիցների մօտ:

Յանկարծ լսուեց վաճառականի խուպոտ ձայնը.

«Համեցէք պարոն, հիմա ես ու դու մենակ ենք, խանգարող չկայ, ասէք խնդրեմ, ինչով կարող եմ օգնել»:

«Հաջի աղա, սրանից ճիշտ 25 տարի առաջ ես ձեր յաճախորդներից եմ եղել, ամէն շաբաթ ձեզանից կաշի էի գնում, նախկին շաբաթուան վճարելիքը հաշուեփակ անելով նոր գնածիս գումարը մնում էր պարտք, անկախ ինձանից այնպէս արագ վիճակուեց, որ ընտանիքով գաղթեցինք Հայաստան, յետոյ հաշիւներս քննելով նկատեցի մոռացութեան եմ մատնել ձեր պարտքը, որը կազմում է՝ 3000 թուան, շատ ամօթով մնացի, խնդրում եմ գայն չվերագրէք որպէս ճարպկութիւն կամ Տէրը մի արասցէ խաբեբայութիւն, աղաչում եմ ընդունէք այս գումարը յաւելեալ տոկոսով»:

«Ներողութիւն պարոն, կարծեմ դուք սխալ հասցէի էք դիմել, ես ձեզ չեմ ճանաչում եւ չեմ հասկանում ինչ էք ասում, դուք ո՞վ էք եւ ի՞նչ է ձեր անունը»:

Հայկը քաջալերւած նրա յարգալից խօսքերից ներկայացրեց իրեն.

«Հաջի աղա՛, ես Հայկ Աղամեանն եմ, յիշեցի՞րք»:

Վաճառականը խորանալով Հայկի դէմքին լուռ հայեացքով գննեց

Շար.ք էջ 20



**Blue Cross of California takes the worry out of health care.**

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Life Insurance by BC Life & Health Insurance Company
- Individual and Family Plans
- HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company
- Medicare Supplement Plans

**Call now and let me help take the worry out of your health care!**

**HARUT DER-TAVITIAN**  
Authorized Independent Agent  
1807 W GLENOAKS BLVD. #202  
GLENDAL, CA 91201  
(818) 502-3233  
HARUT@EXCELHYE.COM  
WWW.EXCELHYE.COM  
CA Insurance  
License #0B28270



The Power of Blue.™

Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119



# #1

# VOLUME KIA DEALER IN CA!

The Power to Surprise™

CALL OUR **24 HOUR PRE-RECORDED**

## INFORMATION HOTLINE

TO HEAR DESCRIPTION & PRICES ON EVERY PRE-OWNED & CERTIFIED USED VEHICLE.

CALL **888-303-4542**

AND ENTER THE EXTENSION OF THE VEHICLE IN WHICH YOU ARE INTERESTED. **MINIMUM \$1,500 SAVINGS ON EVERY PRE-OWNED VEHICLE IN STOCK!**

Year, Make, Model	STK. YMR	Extension	Year, Make, Model	STK. YMR	Extension	Year, Make, Model	STK. YMR	Extension	Year, Make, Model	STK. YMR	Extension
2005 Dodge Neve	F70316	219426	1001	2002 Isuzu Trooper	P10944	009635	1061	2007 Toyota FJ Cruiser	P10427	001471	1119
2004 Dodge Figer	F40544	101127	1002	2004 Toyota Highlander	P10810	102150	1064	2003 Volkswagen Beetle	P10835	213395	1120
2001 Chevrolet Corvette	F70902	115184	1003	2001 Honda CR-V	F70945	015795	1065	2005 Infiniti G35	P10735	212353	1122
2006 Dodge Dakota	F70001	667817	1005	2004 Kia Rio	F70730A	300641	1066	2007 Ford Mustang	P61198A	200380	1123
2007 Dodge Ram 1500	F70731	175067	1006	2004 BMW 34	F70419	50098	1067	2003 Infiniti Q3	P10855	100121	1124
2003 Ford Explorer	F70951	7307094	1007	2003 BMW 34	F70551	724012	1068	2006 Toyota RAV4	P10336	043422	1125
2006 Pontiac G6	F70781	204615	1008	2001 Toyota FJ Cruiser	F70780A	009723	1069	2003 BMW 325i	P10921	060239	1126
2005 Ford Thunderbird	F70310	106369	1009	2006 Honda Element	K70540A	005382	1070	2006 Hyundai Tucson	P10264	426258	1127
2006 Ford E-350	F70310	403340	1010	2007 Chevrolet Express G-500	P10880	109587	1071	2006 Hyundai Tucson	P10266	426294	1128
2005 Chrysler Sebring	F70926	639088	1011	2001 Chevrolet Malibu	P10715	292423	1072	2006 Hyundai Tucson	P10269	424991	1129
2004 Ford Expedition	F70459	0114590	1012	2007 Nissan Pathfinder	P10662	007398	1073	2006 Hyundai Accent	P10369	007970	1130
2002 Ford Explorer	F70153	427040	1013	2003 Honda CR-V	P10948	037848	1074	2003 Volkswagen Passat	P10895	410001	1131
2006 Ford E-150	F70494	015841	1014	2006 Volkswagen Beetle	P10851	300015	1075	2005 Hyundai Elantra	P10765	010928	1132
2000 Pontiac Bonneville	F70821	255632	1015	1997 Nissan Pathfinder	K70991A	109939	1076	2005 Nissan Altima	P1086A	047571	1133
2005 Pontiac Grand AM	F70102	253540	1016	2007 Hyundai Sonata	F70784	170039	1077	2003 Mercedes ML350	P1095A	432650	1134
2000 Ford Windstar	F70871	060860	1018	2006 Hyundai Sonata	F70258	070942	1078	2005 Toyota Camry Solara	P10962	506190	1135
1998 Chevrolet 3500	P60732	210530	1019	2007 Hyundai Sonata	F70785	177288	1079	2007 Kia Sorento	F70910	079106	1136
2005 Nissan Frontier	F70780A	404496	1020	2006 Mercedes E350	F70896	020522	1080	2005 Kia Sorento	C633	407730	1137
2004 GM Savvy	F70943	306335	1021	2006 Toyota Tundra	P10823	548462	1081	2005 Kia Rio	P10515	275561	1138
2005 Honda Accord	F70949	077790	1022	2006 Toyota Tundra	C631	545190	1082	2005 Mitsubishi Lancer	P10957	032675	1139
2007 Chevrolet Trailblazer	F70800	102026	1023	2006 Toyota Sequoia	P10368	262064	1083	2006 Kia Sportage	P10789	108731	1140
2003 Honda CR-V	F70933	011601	1024	2003 Toyota Sequoia	P50488	139604	1084	2006 Mitsubishi Lancer	P10960	010929	1141
2002 Mitsubishi Montero	K517400B	021068	1025	2003 BMW X5	P10313	079042	1085	2006 Kia Sportage	P10812	101348	1142
2004 Lexus IS	K70898	001350	1026	2003 BMW X5	P60756	042521	1086	2005 Chevrolet Aveo	P10925	225446	1143
2005 Honda Civic	K7040100	023741	1027	2002 Lexus RX	P60211	288749	1087	2006 Kia Spectra	P10921	228390	1144
2006 Jeep Liberty	F70843	220660	1028	2006 Mitsubishi Outlander	F70272	032060	1088	2006 Kia Sedona	P10912	074506	1145
2004 Kia Rio	F70804A	325433	1029	2006 Mitsubishi Outlander	F70271	045102	1089	2006 Kia Optima	P10958	036658	1146
2006 Hyundai Sonata	F70815	105623	1030	2005 Kia Rio	F70938	301300	1090	2002 Kia Sedona	K10838A	34911	1147
2004 Lincoln LS	P60106	046521	1031	2006 Mini Cooper	F70906	207551	1091	2006 Kia Sedona	P10917	073262	1148
2004 Honda Accord	F70940	106006	1032	2006 Mazda Mazda3	P60644	499221	1092	2006 Kia Sedona	P10915	070267	1149
2006 Jeep Commander	F70838	158831	1033	2006 Chevrolet Aveo	F70922	568277	1093	2004 BMW 325i	P10920A	046118	1150
2006 Nissan Maxima	F70824	064712	1034	2003 Audi A4	07124	254156	1094	2006 Dodge Sprinter 2500	P10904A	060743	1151
2003 Nissan Frontier	P61304	427397	1035	2003 Audi A4	07124	254156	1094	2004 Kia Optima LX	P40363	270295	1152
2007 Toyota Camry	F70778	023121	1036	2006 Nissan 350Z	F70599	305529	1095	2005 Kia Optima	P60261	387301	1153
2007 Dodge Charger	F70284	725954	1037	2003 Nissan Maxima	C634	415377	1096	2005 Kia Optima	P60346	408986	1154
2006 Pontiac Grand Prix	F70359	241085	1038	2004 Nissan Maxima	F70555	215971	1097	2003 Kia Optima	P60943	208477	1155
2007 Nissan Frontier	F70750	401217	1039	2001 Nissan Maxima	F70805	042055	1098	2002 Kia Optima	11292	099588	1156
2006 Honda Civic	K7146KA	510824	1041	2005 Scion xB	F70946	208216	1099	2002 Kia Optima	11290	106605	1157
2002 Jeep Grand Cherokee	F70947	231055	1042	2007 Nissan Maxima	F70456	001209	1100	2005 Kia Optima	P60330	293904	1158
2003 Acura MDX	F70711	534154	1043	2003 Kia Spectra	F70780A	295029	1101	2005 Kia Optima	P60258	387142	1159
2004 Acura MDX	F70718	550191	1044	2007 Toyota Camry	F70961	003119	1102	2005 Kia Optima	P50928	232621	1160
2006 Chevrolet Express G-500	F70889	227677	1046	2004 Infiniti G35	F70354	003738	1103	2005 Kia Optima	P60705	290964	1161
2006 Nissan Maxima	F70952	029818	1047	2005 Infiniti G35	F70643	403014	1104	2005 Kia Amari	P60196	053596	1162
2005 Nissan Sentra	K61738A	463207	1049	2003 Infiniti Q3	P60112	103945	1105	2006 Kia Sorento	P10784	038004	1163
2006 Nissan Sentra	F70936	404932	1050	2004 Infiniti Q3	F70558	203890	1106	2003 Kia Sorento	P10130	108175	1170
2006 Nissan Sentra	F70315	459645	1051	2004 Infiniti Q3	F70416	202827	1107	2006 Kia Sorento	P10781	572701	1171
2004 Volkswagen Passat	F70903	106112	1052	2005 Mini Cooper	F70596	065224	1108	2006 Kia Sorento	P10696	050321	1172
2006 Chrysler Town & Country	F70956	704270	1053	2003 Infiniti FX35	F70417	001942	1110	2005 Kia Sorento	P50771	416839	1173
2007 Toyota Camry	F70964	121236	1054	2001 Volkswagen Passat	F70924	052217	1111	2006 Kia Sorento	P10706	501432	1174
2002 Toyota Tundra	F70941	246321	1055	2004 Infiniti FX45	F70540	400303	1112	2006 Kia Rio	P10782	140190	1175
2006 Chevrolet Express G-500	F70881	111972	1056	2005 Infiniti FX45	F70520	402104	1113	2001 Audi A8L	P10861	124569	1176
2002 Jaguar X-Type	F70867A	C04090	1057	2006 Suzuki K-7	F70373	105206	1114	2005 Kia Sorento	P10568	443625	1177
2004 Toyota Sienna	F70942	221009	1058	2006 Suzuki K-7	F70372	105256	1115	2005 Kia Sorento	P60036	501316	1178
2004 Nissan 350Z	F70753A	151110	1059	2005 Hyundai Elantra	F70953	005624	1116	2006 Kia Sportage	P10490	156674	1179
2003 Toyota Celica	F70910	060112	1061	2005 Nissan Altima	F70965	130618	1117	2006 Kia Sportage	K10499A	225194	1180
2004 Chevy Trailblazer	F70925	275037	1062	2003 Toyota Highlander	P60657	115665	1118	2002 Audi A6	P10897	125602	1181



**#1 VOLUME KIA DEALER IN CA!**

2242 San Fernando Road, LA 90065

All advertised prices exclude government fees and taxes, any finance charges, any dealer document preparation charge and any emission testing charge. All vehicles are on approval of credit. Rebates are not to be used with any special APR programs. Offer ends the close of business date of publication.

TOLL FREE:

**866-211-8000**

SE HABLA ESPAÑOL

VIEW PICTURES

Check Out These Vehicles & More @ [www.glendalekia.com](http://www.glendalekia.com)

# ՄՈՒԱՅՈՒԱԾ ՊԱՐՏԵԸ

Շարունակում էք 18-էն

նրան ոտից ցզլուխ, ապա իրենից վատահ պնդեց, թէ.

-Չէ եղբայր, քեզ չեմ ճանաչում, սխալուում էք, ինդրեմ, ինձ մի խանգարէք.

-Հաջի աղա', ես չեմ սխալուում, ես վատահ եմ եւ նպատակ չունեմ ձեզ խանգարելու, մինչեւ պարտքս չտամ, այստեղից չեմ գնալու, 25 տարիներ շարունակ այս պարտքը ինձ նեղել ու անհանգստացրել է, ինդրում եմ ընդունէք եւ ինձ ազատէք այս մեղքից.

Վաճառականը լրջացաւ, մտքերի մէջ ընկաւ գլուխը կախ աչքերը փակած, մի քանի րոպէ այդպէս խոկուն վիճակում գլուխը բարձրացրեց եւ ասաւ.

-Քեզ ոչ ճանաչում եմ եւ ոչ էլ կարող եմ այդ դրամն ընդունել, ինդրում եմ խանութից գնացէք, եթէ ոչ միլիցիա կը կանչեմ.

-Հաճիք հաջի աղա', մի քիչ համբերատար եղէք, ես արխային եմ, որեւէ կասկած չունեմ, որ ձեզ պարտք եմ, ստուգէք այդ թուակաշի ձեր հաշուի տետրակը, լուսնի նման պարզ յիշում եմ, որ ձեր հաշուեմատեանի մէջ նշել էք այս գումարը:

Վաճառականը նեղ դրութեան մէջ էր, արդէն զգում էր, որ պրծում չկայ նրա ձեռքից, հարկադրուած համաձայնուեց տետրակները քննել:

Նա փաղաքշական թոնով Հայկին կոչեց.

-Մուսիօ ջան, հիմա որ էսպէս է, աստիճաններից բարձրացիր, գնայ էն վերելը, բացի այս տար-

ուանը 24 տարիների հաշուետետրակները այնտեղ են, բայց չեմ կարծում առողջ տետրակ մնացած լինի մկների եւ փոշու ձեռքից:

Հայկը առանց ժամանակ կորցնելու տետրակները մէկ-մէկ տարեթուերի յաջորդականութեամբ դասաւորել սկսեց, փոյթը չէր քանի ժամ կը տեւի, միայն այս իր արարքով կուզէր հաջի աղային հասկացնել, որ պարտքի չմարելը մոռացութեան հետեւանք է եղել, նա ուրախ տրամադրութեամբ սկսեց աշխատանքը: Մի քանի ժամ սուս ու փուս եւ ուշ ի ուշոյ տետրակները թերթելուց ու կարդալուց յետոյ գտաւ այն էջը, որի վրայ գրուած էր իր անունը եւ դիմացը 3000 թուման պարտքը, այնտեղից բարձրադաղակ կանչեց.

-Գտայ հաջի աղա', գտայ, տեսա՛ք, ես ճիշտ էի ասում:

Վաճառականը ինդրոյ առարկայ տետրակը, էջը, իր ձեռագիրը եւ Հայկի անունն ու գումարը ստուգելուց տեսաւ որ շիտակ է, այն ինչ որ Հայկն էր ասում եւ դառնալով Հայկին.

-Իրօք ճիշտ են ասում, որ հայերը ճշտախօս եւ ազնիւ են, հալալ լինի մօրդ կաթը քեզ, Աստուած վկայ՝ դուք լաւ ժողովուրդ էք, կեանքի մէջ շատ-շատ անգամ ազնիւներն ու լաւերն են տուժում, այս պատճառով պատմութեան մէջ դուք շատ էք տուժել, բայց վատահ եղէք, դուք կը հասնէք ձեր նպատակներին, ճշմարտութիւնը ուշ է իմացուում, բայց երբեք չի կորցուում, այժմ թոյլ տուր, ես քեզ համբուրեմ եւ շնորհակալութիւն յայտնեմ.

-Հաջի աղա, ինդրում եմ

հանգիստ եղէք, ուրախ եմ, որ պարտքս փակում եմ եւ ազատուում եմ մեղքի զգացումից.

-Իմ սիրելիս, թոյլ տուր, գումարը սրտանց նուիրեմ քեզ, բայց նկատելով որ փափաքդ է պարտքդ մարել, ես միայն իսկական գումարը կը վերցնեմ, հոգու չափ շնորհակալ եմ:

Վաճառականը դրամը դրեց գրպանն ու դուրս ելաւ խանութից հայկին պատուիրելով որ սպասի իրեն:

Վաճառականը խանութ վերադարձաւ դալիչէ գորգ թեւատակին, մեկնելով Հայկին ասաց.

-Սիրելի Հայկ, ընդունի՛ր այս գորգը որպէս նւէր, այդ քո նկարագրով եւ խառնուածքով արժանի ես այս նուէրին, այս գորգը չձախես, թանկագին է, պահիր մօտդ ի յիշատակ մեր բարեկամութեան, թող Աստուած քեզ պէս մարդկանց երկար կեանք տայ, որ ուրիշներ ձեր նմաներից ճշմարտութիւն եւ ազնուութիւն սովորեն, մնաս բարով իմ սիրելի բարեկամը:

Հայկը անսպասելի վիճակից էր իմանում ինչ անէր, ուրախութիւնից շփոթուել էր, վաճառականի կտրուկ խօսքերի վրայ չկարողացաւ գորգը մերժել, նուէրը սիրով ընդունեց, քաղցր ժպիտով թողեց խանութը՝ մնաք բարովի ջերմ զգացումներով:

Հայկը բերկրանքից իրեն կորց-

րել էր, մերթ վազում էր, մերթ կանգնում էր եւ խօսքեր էր մրմնջում, ձեռքերն էր շարժում, կարծես մոռացել էր, որ պէտք է մեքենայ նստի, նա զգում էր թեթեւացել եւ մաքրուել է այդ նեղող մեղքից:

Հայկը շատ ուշ հասաւ տուն, տնեցիները երկմտել էին, անախորժ պատահարի կասկածանքներ էին անցնում մտքներից, կէսօրը վաղուց անցել էր եւ առանց ճաշելու սպասում էին Հայկի գալուն: Նրանք երբ դուան գանգի ձայնը լսեցին, բոլորն աչքերն ուղղած դէպի դուռը կանգնեցին, տեսան Հայկն էր, ուրախ կանչերով դիմաւորեցին.

-Աղբեր ջան որտեղ էիր, դարձել էինք կիսամեռ, ինչո՞ւ այսքան ուշացար, Դաւիթն էր հարցնողը.

Երբ Հայկը եղելութիւնը պատմեց տնեցիներին, բոլորով միասին ուրախութեան երջանիկ պահեր ապրեցին:

Հայկի բարի անուան համբաւը թեւածեց հարազատների, բարեկամների, ընկերների եւ ճանաչողաց մօտ բոլորի գովասանքին արժանանալով:

Հայկն ու Սաթենիկը մի ամսուայ ժամկէտով Թեհրանում վայելելով հարազատների սէրն ու գուրգուրանքը նուէրներով վերադարձան հայրենիք վառ սիրոյ անմոռաց յիշատակներով:

(Վերջ)

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեով: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104



Wahib

Wahib's  
MIDDLE EAST RESTAURANT  
الشرق مطعم  
MEDITERRANEAN  
LEBANESE FOOD

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



MOUHAMAD SALEM & HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

FAMILY ENTERTAINMENT BANQUET HALL EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT INTERNATIONAL ~ ARABIC CALL FOR RESERVATION



BELLY~DANCING

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA. TEL 626-281-1006 626-587-1048 FAX 626-281-3641



# MOVING SALE !

## Mission Liquor & Wines

 <p><b>Chivas Regal</b> 12-Yr Scotch <b>\$16.99</b> 750ml <b>\$33.99</b> 1.75L</p>	 <p><b>Johnnie Walker</b> Black Label <b>\$19.99</b> 750ml <b>\$47.99</b> 1.75L</p>	 <p><b>Johnnie Walker</b> Blue Label <b>\$129.99</b> 750ml <b>\$249.99</b> 1.75L</p>	 <p><b>Grey Goose</b> Vodka 750ml <b>\$20.99</b></p>  <p><b>Cazadores</b> Reposado Tequila 750ml</p>
 <p><b>Belvedere</b> Vodka 750ml <b>\$20.99</b></p>	 <p><b>Hennessy</b> Cognac 750ml <b>\$20.99</b> VS <b>\$30.99</b> VSOP</p> 	 <p><b>Russian Standard</b> Vodka 750ml <b>\$11.99</b></p>	 <p><b>Absolut</b> Vodka <b>\$13.99</b> 750ml <b>\$24.99</b> 1.75L</p>
 <p><b>Patron Silver</b> Tequila 750ml <b>\$33.99</b></p>	 <p><b>Hennessy XO</b> Cognac 750ml <b>\$98.99</b></p>	 <p><b>Courvoisier XO</b> Cognac 750ml <b>\$69.99</b></p>	 <p><b>Courvoisier</b> Cognac 750ml <b>\$17.99</b> VS <b>\$24.99</b> VSOP</p> 
 <p><b>Dewar's</b> 12-Yr Scotch 750ml <b>\$17.99</b></p>	 <p><b>Don Julio 1942</b> Tequila 750ml <b>\$89.99</b></p>	 <p><b>Cristall</b> Vodka 750ml <b>\$9.99</b></p>	 <p><b>Imperia</b> Russian Vodka 750ml <b>\$17.99</b></p>
 <p><b>Ciroc</b> Vodka 750ml <b>\$19.99</b></p>  <p><b>Level</b> Vodka 750ml</p>	 <p><b>Johnnie Walker</b> Red Label 750ml <b>\$13.99</b></p>	 <p><b>Skyy</b> Vodka <b>\$10.99</b> 750ml <b>\$20.99</b> 1.75L</p>	 <p><b>Stolichnaya</b> Vodka 1.75L <b>\$18.99</b></p>
 <p><b>Czar's Gold</b> Vodka 750ml <b>\$14.99</b></p>	 <p><b>Louis XI XO</b> Brandy 750ml <b>\$14.99</b></p>	 <p><b>Don Julio</b> Añejo Tequila 750ml <b>\$34.99</b></p>	 <p><b>Ora</b> Vodka 750ml <b>\$10.49</b></p>
 <p><b>Ketel One</b> Vodka 750ml <b>\$17.49</b></p>	 <p><b>Johnnie Walker</b> Green Label 750ml <b>\$29.99</b></p>  <p><b>Gold Label</b> 750ml <b>\$49.99</b></p>	 <p><b>El Massaya</b> Arak 750ml <b>\$19.99</b></p>	 <p><b>Wines</b> Assorted 750ml <b>\$1.89</b></p>

1801 E. Washington Blvd., Pasadena, CA 91104

Liquor (626) 794-7026 • Tobacco (626) 797-0500

Corner of Allen & Washington • Open Monday—Saturday 9 am - 8 pm

www.missionliquor.com

\*Minimum 12 Bottle Mix & Match • This ad expires on 10/17/07 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice • No checks or credit cards  
All items are 750ml in size unless specified.

**ՄԱՐԶԱԿԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ**

Հայաստանի ֆուտբոլի առաջնության 23-րդ եւ 24-րդ հանգրուաններու մրցումներուն արդիւնքները

Փիւնիկ - Բանանց	0-3	Միկա - Փիւնիկ	1-0
Կիլիկիա - Արարատ	1-3	Ուլիս - Բանանց	2-1
Գանձասար - Ուլիս	1-2	Գանձասար - Կիլիկիա	4-0
Շիրակ - Միկա	0-0	Արարատ - Շիրակ	4-0

**Խուճերու դասաւորումը**

	Խաղ	Ցաղթ.	Հաւս.	Պարտ.	Կոլ	Միակոր
1. Արարատ	24	15	3	6	45-32	48
2. Փիւնիկ	23	15	2	6	51-19	47
3. Բանանց	24	14	4	6	46-22	46
4. Միկա	23	11	7	5	38-22	40
5. Գանձասար	24	10	5	9	31-26	35
6. Շիրակ	24	6	7	11	20-34	25
7. Ուլիս	24	6	4	14	16-43	22
8. Կիլիկիա	24	1	2	21	8-57	5

**ՖԻՖԱ-Ի ՆԱԽԱԳԱՀ ԵՈՋԵՖ ԲԼՍԵՐԸ ԵՒ ՈՒԵՖԱ-Ի ՆԱԽԱԳԱՀ ՄԻՇԵԼ ՊԼՍՏԻՆԻՆ ԿԸ ԺԱՄԱՆԵՆ ԵՐԵՒԱՆ**

Հոկտեմբերի 15-ից 16-ը Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբէն Հայրապետյանի հրահրով Երեւան կը ժամանեն ՖԻՖԱ-ի նախագահ Եոզեֆ Բլատերը եւ ՈՒԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինին: Հոկտեմբերի 16-ին ՖԻՖԱ-ի եւ ՈՒԵՖԱ-ի նախագահներին կ'ընդունի Ռոբերտ Քոչարեանը, ապա Սերժ Սարգսեանը:

Նոյն օրը ՀՖՖ նախագահ Ռուբէն Հայրապետեանը, ՖԻՖԱ-ի նախագահ Եոզեֆ Բլատերը եւ ՈՒԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինին կը մասնակցեն Աճառեան փողոցին յարող տարածքում «Մանկապատանեկան ինտերնատ մարզադպրոց, ազգային հաւաքականների տեխնիկական կենտրոնի» հիմնաքարի տեղադրման պաշտօնական արարողութեանը:

Հիմնաքարի տեղադրման պաշտօնական արարողութիւնից յետոյ նախագահները կ'այցելեն «Բանանց» ՖԱ-ի կողմից շահագործուող մանկապատանեկան ֆուտբոլային դպրոց, որը վերանորոգուել է ՖԻՖԱ-ի «Goal I» ծրագրի շրջանակներում:

Ի դէպ, թէ Պլատինին, թէ Բլատերը 2-րդ անգամ կը լինեն Հայաստանում: Միշել Պլատինին Հայաստան էր ժամանել 2006թ. Օգոստոսին, երբ դեռ ՈՒԵՖԱ-ի նախագահի թեկնածու էր: Ինչպէս յայտնի է՝ Ռուբէն Հայրապետեանը նրան էլ տուեց իր ձայնը Յունուարին կայացած ընտրութիւնների ժամանակ:

Իսկ ՖԻՖԱ-ի նախագահ Զէյ Բլատերը Հայաստանում եղել է 2003թ. Մայիսին եւ մասնակցել «Բանանցի» ներկայիս մարզաբազայի բացման արարողութեանը:

**ԵՒՐՈՅԻ ԵՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ**

Զեխիայի մայրաքաղաք Պրահայում անցկացուած ճիւղոյի Եւրոպայի երիտասարդական առաջնութիւնում Հայաստանը ներկայացնող 5 մարզիկներից 2-ը դարձան մրցանակակիր: Աղջիկների մրցաշարում յաջող հանդէս եկաւ մինչեւ 52 կգ քաշային Անուշ Յակոբեանը: Նա հասաւ մինչեւ եզրափակիչ, որտեղ պարտուելով մրցակցին, արժանացաւ արծաթէ մետալի: Պատանիների մրցաշարում մինչեւ 90 կգ ճիւղոյիստների մրցավէճին մասնակցած Յակոբ Առաքելեանը նուաճեց պրոնզէ մեդալ: Հայաստանի միւս ներկայացուցիչներին մրցանակային տեղ զրաւել չի յաջողուել:

Հայ երիտասարդները կը մասնակցեն նաեւ Նոյեմբերի 24-ին Աւստրիայի Զալցբուրգ քաղաքում կայանալիք Եւրոպայի մինչեւ 23 տարեկանների առաջնութեանը:

**ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ**

Հայաստանի անկախութեան 16րդ տարեդարձին առթիւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան կազմակերպած փառատօնի փայլուն յաջողութեան առթիւ, ներկայ մը գնահատելով տարուած աշխատանքը եւ յաջողութիւնը՝ \$150 տոլար կը նուիրէ «Մասիս»ին:

**»ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ«**

ՀԵՌՈՒՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ  
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ  
ԿԼԵՆՏԵՅԼ - ՊԸՐՊԵՆՔ - ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ  
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

**ՔԱԶ ՆԱԶԱՐ**

**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:00  
Կլենտոյլի 26-րդ կայանից

**ԵՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ**

**ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ**

Անգլիոյ ֆուտբոլի առաջնութեան 9-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Մանչեսթըր Եուն. - Ուիկան Աթլ.	4-0	Պլէքպըրն - Պըրմիքսիտ	2-1
Ասթըն Վիլլա - Ուէսթ Յամ	1-0	Նիւքասլ - Էվըրթըն	3-2
Արսենալ - Սանտորդլենտ	3-2	Մանչեսթըր Ս. - Միտլդլաքոբ	3-1
Ռիտինկ - Տերայի Քաունթի	1-0	Լիվըրպոլ - Թոթեմհամ	2-2
Պոլթըն - Չելսի	0-1	Ֆուլհամ - Փորթսմութ	0-2

Առաջատար խումբերու դասաւորումը

Արսենալ	8	7	1	0	19-6	22
Մանչեսթըր Եուն.	9	6	2	1	11-2	20
Մանչեսթըր Սիթի	9	6	1	2	14-7	19
Լիվըրպոլ	8	4	4	0	14-4	16
Փորթսմութ	9	4	3	2	17-12	15
Պլէքպըրն	8	4	3	1	9-6	15
Չելսի	9	4	3	2	8-8	15

**ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ**

Գերմանիոյ ֆուտբոլի առաջնութեան 9-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Տորթնուտ - ՎՖԼ Պոխում	2-1	Շալքե-04 - Քարլսրուհէ	0-2
Տուիզպուրկ - Վարտըր Պոլմըն	1-3	Այն. Ֆրանքֆորթ - Պ. Լիվըրպոլըն	2-1
Արմ. Պիլըֆելտ - Յամպուրկ	0-1	Պ. Միւնիխ - Նիւրնբերգ	3-0
Վոլսպուրկ - Ռոսթոք	1-0	Յերթա Պերլին - Քոթայիս	0-0
Շոթթօպրո - Յամպլըր-96	0-2		

Առաջատար խումբերու դասաւորումը

Պայերն Միւնիխ	9	7	2	0	25-3	23
Քարլսրուհէ	9	6	0	3	13-11	18
Վարտըր Պոլմըն	9	5	2	2	21-14	17
Յամպուրկ	9	5	2	2	12-7	17
Շալքե-04	9	4	4	1	15-8	16
Յամպլըր-96	9	5	1	3	13-13	16
Այն. Ֆրանքֆորթ	9	4	3	2	11-9	15

**ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ**

Իտալիայի ֆուտբոլի առաջնութեան 7-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Աթալանթա - Ուտինետ	0-0	Փալերմօ - Ռեճինա	1-1
Ինթըր Միլան - Նապոլի	2-1	Սիենա - Էմպոլի	3-0
Գենովա - Քալիարի	2-0	Թորինօ - Սամպորիա	1-0
Լացիօ - Ա. Սէ. Միլան	1-5	Փարմա - Ա. Էս. Ռոմա	0-3
Քաթանիա - Լիվորնօ	1-0	Ֆիորենցինա - Եուվեմբուս	1-1

Առաջատար խումբերու դասաւորումը

Ինթըր Միլան	7	5	2	0	16-5	17
Ա. Էս. Ռոմա	7	4	2	1	15-8	14
Եուվեմբուս	7	4	2	1	16-7	14
Ֆիորենցինա	7	3	4	0	13-7	13
Գենովա	7	3	3	1	8-7	12
Փալերմօ	7	3	2	2	10-10	11
Ուտինետ	7	3	2	2	8-10	11

**ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ**

Սպանիայի ֆուտբոլի առաջնութեան 7-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Աթլետ. Պիլայաօ - Ալմերիա	1-1	Ռէալ Մատրիտ - Յուլվա	2-0
Սելիլլա - Տեխ. Քորունա	0-1	Օսասունա - Վիլլառէալ	3-2
Պարսելունա - Աթլետ. Մատրիտ	3-0	Մայորքա - Կեթաֆէ	4-2
Սարակոսա - Էսպանոլ	3-0	Ռասինկ - Ռէալ Վալյատոլիտ	2-0
Վալենսիա - Եսպանիոլ	1-2	Ռէալ Մուրսիա - Ռէալ Պաթիս	0-0

Առաջատար խումբերու դասաւորումը

Ռէալ Մատրիտ	7	6	1	0	16-3	19
Վիլլառէալ	7	5	0	2	11-8	15
Վալենսիա	7	5	0	2	10-9	15
Պարսելունա	7	5	2	0	16-4	17
Եսպանիոլ	7	4	1	2	10-8	13
Մայորքա	7	3	2	2	13-10	11
Աթլետ. Մատրիտ	7	3	2	2	11-7	11

**ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ**

Ֆրանսայի ֆուտբոլի առաջնութեան 10-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Մոնպօ - Նանսի	1-3	Մէքց - Սթրասպուրկ	1-2
Սէնթ Էթիէն - Մարսել	1-0	Լանս - Օքսէռ	2-0
Լը Մանս - Նիս	2-0	Մոնպէ - Թուլուզ	0-1
Լորիան - Քան	0-0	Փարիզ Սէն ժերմէն - Րընէ	1-3
Լիլ - Վալանսիէ	3-0	Պորսօ - Լիոն	1-3

Առաջատար խումբերու դասաւորումը

Լիոն	10	7	1	2	21-9	22
Նանսի	9	7	1	1	18-6	22
Լը Մանս	10	6	1	3	15-11	19
Պորսօ	10	5	3	2	13-9	18
Րընէ	10	5	3	2	12-8	18
Վալանսիէ	10	5	2	3	13-12	17
Սթրասպուրկ	10	4	3	3	10-7	15

# «ՇՆՉԱԿԵԱՆՆԵՐՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԸՆԴՊԻՄՈՒԹԻՒՆ ԵՆ»

Շարունակուած էջ 8-էն

կախուածութեան մէջ դնել Ռուսաստանից կամ մէկ այլ գերտէրութիւնից, նրանց վաճառելով ժողովրդի սեփականութիւնը հանդիսացող գործարաններն ու ռազմավարական նշանակութիւն ունեցող ձեռնարկութիւնները, այդպիսով մեր ժողովրդի հարկերամեակներով փափագած անկախութիւնը կորստեան վտանգի առջեւ կանգնեցնելով: Եւ գիտէ՞ք ինչու է այդպէս, որովհետեւ մենք չունենք լեզուաբան իշխանութիւն «իշխանութիւնը գործող է միայն այն ժամանակ, եթէ նրա նպատակները համընկնում են երկրի բարձրագոյն շահերի հետ եւ նա օգտուում է քաղաքացիների վստահութիւնից»: Այսօր կարող ենք փաստել, որ մեր իշխանութիւնները թողնեն, որովհետեւ չունեն ժողովրդի աջակցութիւնը եւ նրանց նպատակները չեն համընկնում երկրի բարձրագոյն շահերի հետ: Այսօր մեր առաջնային խնդիրն է բնականոն եւ թափանցիկ ընտրութիւնների արդիւնքում ձեւաւորել իշխանութիւն, որը կը վաչելի ժողովրդի սէրն ու յարգանքը: Այդպիսի իշխանութիւնը շատ աւելի համարձակ է իր որոշումների մէջ աւելի անկախ՝ սնտեսական եւ քաղաքական յարաբերութիւններում:

- Ես հրաշալի յիշում եմ 2007-ի Յունուարի 29 - ին Ձեր ասուլիսը, որում Դուք նշեցիք, թէ Հնչակեան կուսակցութեան գերապատակը ամէն գնով Աժ մտնելը չէ, թէպէտ ամէն մի կուսակցութեան խնդիրը հենց դա է. մասնակցել ընտրութիւնների, լծակներ ունենալ եւ առաջ տանել իր ծրագիրը: Նաեւ շարունակեցիք, թէ տեսնելով իշխանութիւնների մեղքով ստեղծուած իրավիճակը, արմատական ընդդիմութիւն չլինելով հանդերձ՝ ստիպուած էք գրաւել հենց այդ շարքերը: Հիմա նախագահական ընտրութիւններ են եւ ես ուզում եմ հասկանալ. նո՞յն դիրքորոշումն ունէ՞ք, հնչակեաններն արմատական ընդդիմութիւն են լինելու իշխանութեանը:

- Մեր այդ տեսակէտը, որ ասել եմ վերջին խորհրդարանական ընտրութիւններին, իսկապէս հաստատուեց: Այո, մենք ստիպուած ենք արմատական ընդդիմութիւն դառնալ եւ արդէն ենք: Անկախ մեր ուժերից, մեր ունեցած հնարաւորութիւններից՝ գտնում ենք, որ շատ կարեւոր է, որ սկզբունքներ ունենանք, թէ յանուն ինչի են պայքարում: Այդ ընտրութիւնները ցոյց տուին, որ գործող վարչախումբը ամէն ինչին ընդունակ է, մինչեւ անգամ նրան, որ փորձում են կոնկրետ կուսակցութիւնների ստորացնել եւ «տեղը ցոյց տալ»: Դա ես ասում եմ գոնէ մեր մասով, որովհետեւ յատուկ քաղաքականութիւն տարուեց Հնչակեան կուսակցութեան նկատմամբ: Այստեղ կային բազմաթիւ կուսակցութիւններ, որ բացառուում էր մեզնից շատ ձայն հաւաքէին: Եւ կառուցներ ունէինք մարզային եւ գոնէ կուսակցութեան անդամների քանակն էր աւելի շատ եւ ընտրարշաւ ենք տարել եւ վերջապէս Հայաստանում շատ մեծ, կայուն մի գանգուած կայ, որ հնչակեանների սերունդներն են, իրենց արմատները չիշուած են եւ ստուգել ենք՝ ձայնը մեզ էին տուել: Բայց արդիւնքում վերջին տեղում յայտնուեցինք: Ես արդէն չեմ էլ

ուզում աւելորդ անգամ այդ մասին խօսել: Այո ստիպուած ենք արմատական ընդդիմութիւն լինել, մենք մեր տեսակով ենք այդպիսին, մենք մեր սկզբունքայնութիւնը բարձր ենք գնահատում:

- Որոշե՞լ էք արդէն, ու՞մ էք սատարելու նախագահական ընտրութիւններին: Կարծում եմ դուք էլ ձեր առանձին թեկնածուն չէք առաջադրի. չէ՞:

- Նախագահական ընտրութիւններում մենք սատարելու ենք նրան, ում նպատակներն ազնիւ ենք տեսնում, ում մէջ տեսնում ենք Հայաստանի առաջ կանգնած մարտահրաւէրները դիմագրաւող հզոր մարդ: Մեր դէպքում բացառում է, որ դա լինի իշխանական թեկնածուն՝ ով էլ որ լինի, որովհետեւ մենք տեսնում ենք իշխանութեան իրական դէմքը:

- Ի դէպ, Դուք առաջին կին լինելու էիք, ում հետ Տէր - Պետրոսեանը հանդիպեց... Կարող էք մանրամասնել, թէ ինչ էք քննարկել, կամ՝ ինչն էր այս նախապատուութիւնը բացատրուում:

- Հաւանաբար, հարցազրոյցներում, դեբատներում, ասուլիսներում նկատելով մեր դիրքորոշումը, մեր հաւասարակշիռ մտեցումը դէպի ինքը, չբացառելով նաեւ նախկին բարեկամութիւնը Հնչակեան կուսակցութեան հետ նա որոշեց ինձ հանդիպել: Ինչ վերաբերում է հանդիպմանը՝ ինձ այն շատ է գոհացրել, որովհետեւ ես տեսայ վճռական մարդու, տեսայ մտածող մարդու, որն իրօք մտահոգ է երկրի առաջ ծառայած խնդիրներով եւ գիտակցում է իր առաքելութիւնը: Շատ լուրջ հետեւութիւններ արած մարդ է, որը քննութեան է ենթարկել իր իշխանութեան տարիներին արուած ամէն բան՝ նկատի ունեւ եւ յաջողութիւնները եւ ձախողումները, որոնցից որոշները կանխորոշուած եմ համարում: Արդէտի գոտի, պատեւրագ, շրջափակում... սրանք հեշտ հարթուող խնդիրներ չէին:

- Տիկին Լիւդմիլա, հիմա Ձեզ կը մեղադրեն այն բանում, որ դեռ նախագահական ընտրութիւնները չսկսուած քարոզչութիւն էք անում կոնկրետ անձի համար: Հարցնեմ միայն՝ դա յստակ դիրքորոշում է:

- Ինձ համար՝ աւելի քան յստակ, քանի որ ունեւ Հնչակեան կուսակցութեան դիրքորոշումը եւ ես այդ մասին իրեն էլ ասացի: Ասացի, որ երբեք իր համակիրը չեմ եղել, սակայն, վերագնահատելով իրավիճակը, արդէն որպէս քաղաքական մարդ եւ կուսակցութեան ղեկավար շատ բաների պատճառահետեւանքային կապերը տեսնելով՝ հակուած ենք իր կողմը: Պարզապէս ես հիմա իրաւունք չունեմ յայտարարութիւն անելու, որովհետեւ մարդը դեռ պաշտօնապէս չի ասել, որ դնելու է իր թեկնածուութիւնը նախագահական ընտրութիւններում, մենք էլ դեռ համագումար չենք արել, պաշտօնապէս չենք որոշել, որ իրեն ենք պաշտպանելու: Սակայն վստահ եմ, որ դնելու է եւ յաղթելու է:

- Իսկ դուք հաշուի առնում էք ժողովրդի յիշողութիւնը՞ եւ յետոյ՝ Ձեզ կարող են նաեւ «աբիժնիկութեան մէջ» մեղադրել...

- Իհարկէ հաշուի առնում ենք, գիտեմ նաեւ, որ իշխանութիւնները շատ լուրջ հակաքարոզչական աշխատանք են տանում այդ յիշողութիւնները թարմացնելու ուղ-

# ՀՈԿՈՒՄՊԵՏԱԿԱՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՍԸ ՈՐ Կ'ԱՍՐԱՊՆԴԷ ՄԵՐ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԿԱՌՅՅՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

նութիւն, ոգեւորութիւն, նոր աւիշ ու տրուած անվերանայելի խոստում՝ դէպի լաւը, հիմնականը, կառուցողականը, միայն՝ օր մ'առաջ արտայայտութիւն գտած՝ Փաստաթիւնայի նորակառոյց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. եկեղեցւոյ Սրբ. Խորանին օծման ծիսակատարութեան:

Վեհափառ Հայրապետին Գալիֆորնիա այցը իր աւարտին պիտի յանգէր մոյն օրը, Հոկտեմբեր 2-ի երեկոյան, Տաղիւսան Մշակութային Կեդրոնի բացման հանդիսութեամբ, Հոլիվուտ, յաջորդ օր իր հայրապետական ուղեւորութիւնը շարունակելու համար Ա. Մ.Ն.ի արեւելեան գաղութները:

\*\*\*  
Վեհափառ Տիրոջ Ա.Մ. Նահանգներ կատարած օրհնաբեր այցելութիւնները, ինչպէս հաստատեցին վերի պարբերութիւններում մէջ, ոսկեղէն առիթ կը համդիսանան, վստահ եմ, Իր եւ հօտին միջեւ տակաւ արմատացող հոգեւոր կապին: Իրենց միջել լուռ այլ ջերմ հաղորդակցութիւն մը կը դրսեւորուի ցայտուն կերպով:

Ներկայիս ասարակութեան հոգեկան կամրջումը իր Հայրապետին հետ, իր մէջ կը խտացնէր աղաչելու պէս ակնկալութիւն մը, պահանջ մը, առաջարկութիւն մը, որ կը կապակցուէր մեր եկեղեցւոյ պարզած ներկայ դրութեան, նաեւ, մեր ազգային զարթոնքի սատար կառոյցներուն հետ:

\*\*\*  
Տարաշխարհի անապահով տարածքներու վրայ, բարձրացող մէն մի միլիոններ արժող վսեմաշուր եկեղեցիի գուգահեռ սակայն, տրամագծօրէն իրենց նահանջը կ'ապրին մեր դպրոցները, մշակութային կեդրոնները, գրական-ստեղծագործական կեանքը, մեր մամուլը, որոնք մեր ժողովուրդի գոյութեան պահպանութեան մէջ առանցքային դեր ունեցած են մեր պատմութեան մէջ:

Նիւթական դժուարութիւններու պատճառով օտար դպրոցներ կը յանախեն մեր գաւակները, ուր անոնք կը կորսնցնեն իրենց մեսրոպաշունչ լեզուն, հաւատքը, գիրն ու գրականութիւնը, պատմութիւնը: Անոնք կը կորսնցնեն մեր ազգային հիմնական առանձնաշատ կրթականները, որոնք կ'ապահովեն մեր ազգային ապագան:

Պիտի արժէր հպանցիկ ակնարկ մը նետել այն մասին նաեւ, թէ միլիոններ արժող վսեմաշուր եկեղեցիներու կառուցման մէջ կայ մեր հաւաքական կեանքը ջրատոյ անդուլ մրցակցութեան ոչ նախան-

ձեղի ոգին: Անգամ, ափ մը ծաւալի վրայ քանի մը ցանցառ ընտանիք հաշուող աննշան գաղութներ կ'օժտուին իրերամերժ եկեղեցիներով:

Վստահ եմ, Վեհափառութեան հիմնական ցանկութիւնն է նաեւ, տեսնել մեր եկեղեցին վերամիացած եւ ուժեղ, իր արդարացիութիւնը կորսնցուցած, ժամանակավրէպ դարձած, մեր «եկեղեցական երկփեղկման վերացումով», որպէս Միագլուխ, Միակեդրոն Նուիրապետութիւն, Հայրենիքէն միջեւ Տարաշխարհ:

Խորն են արդէն մեր ժողովուրդին առօրեան խորապէս տագնապեցնող հայրենական մերթիւն եւ արտաին քաղաքական իրավիճակները: Հայրենիքի շուրջ տակաւ ամրապնդող, մեզ տնտեսապէս քայքայող տնտեսական շրջափակումները կը հիւժեն գայն:

Մեր ժողովուրդի ազգային ինքնուրոյնութիւնը վտանգող աղանդաւորական մերթափանցումը կը ջանայ խոտորել մեր ազգային նկարագիրը:

Մեր հայրենի առաջատար մտաւորական (գրող, արուեստագէտ, գիտնական, մասնագէտ, եւ այլն) փաղանգներու արտահոսքը երկրէն դուրս, կը վտանգեն մեր հայրենիքի ստեղծագործական, կառուցողական, նարտարարութեան եւ արդիւնաբերական բափր:

Մեր հայրենի միասնականութիւնը խախտող, ազգային ապահովութիւնը խոչընդոտող ներքին անմիաբանութիւնը տակաւ կը խորանայ ամէնուրեք, հայրենի երկնական մարի տակ:

Ի՞նչ պէտք կայ շարքը երկարելու. նորին Սրբութիւնն Ինք իրագեկ է այդ բոլորին...

\*\*\*  
Փաստաթիւնայի նորակառոյց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. եկեղեցւոյ Սրբ. Խորանի օծման, Առաջնորդարանի Մայր եկեղեցւոյ հիմնարկէմբ, Պրայէմբ, եւ Տաղիւսան Մշակութային Կեդրոնի բացման հանդիսութեան՝ Վեհափառի անձով յափշտակուած, Անոր շրթներէն կախ ինկած ներկայ մուրիբայ հայրորդիներու յուգումնախառն այլ լուռ աչքերով Անոր հաղորդած ակնկալութիւնն այն էր, որ առաւել ուժգնութեամբ շարունակուի Մայր Աթոռ Սրբ. Էջմիածնի նուիրական, ազգաշէն եւ սրբազան առաքելութիւնը, կարեւորաբար լուծու մը տնօրինելու համար մեր հոգեւոր կեանքի եւ հայրենի առօրեայ աղօթ կուտակումն առանց արձակուելու, Մէկ Ազգ, Մէկ եկեղեցի, Մէկ Հայրենիք նշանաբանի ներքին:

պին, թող միշտ լիչեն, որ այդ անցեալում ներկայ չեմ եղել, բայց իրենք եղել են, այն էլ ՆԳՆ - Ի, ԱԱ - Ի, վարչապետի ու այլ մակարդակում: Այսօրուայ ստեղծողն էլ իրենք են, որ ամէն բան աւելի փչացրին: Լեւոնը գոնէ արժանապատուութիւն ունէր՝ ինքը հեռացաւ...

ԳՈՉԱՐ ՍԻՄՈՆԵԱՆ  
«ԻՐԱՒՈՒՆՔ»

Massis Weekly on the Internet  
www.massisweekly.com

# ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ



Նուիրում՝  
**ՍՈՑԻԱԼ ԳԵՄՈԿՐԱՏ  
ՀՆԶԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ**

1887

**120**

**ԱՄԵԱԿԻՆ**

2007

Կազմակերպութեամբ՝  
**ՍԳՀԿ Արեւմտեան  
Ամերիկայի Վարիչ Մարմնի**



Օրուան Գլխաւոր Բաւախօս՝  
**Լիւտֆիլա  
Մարգսեան  
Հայաստանի ՍԳՀԿ-ի  
Ատենապետ**

**Գեղարունատական ճոխ Յայտագիր**

Գեղարունատական Ղեկավար՝  
**Խմբավար՝ Միքայէլ Աւետիսեան**

Կը Մասնակցին՝  
**Ատիս Հարմաւտեան    Գագիկ Պատալեան  
Յարութ Յակոբեան    Սամուէլ Վարդանեան**

**Կիրակի, 4 Նոյեմբեր, 2007**

Երեկոյան ժամը 6:00-ին  
**Glendale High School-ի սրահին մէջ**  
1440 East Broadway, Glendale, CA 91205

**Մուտքը Ազատ**